

Ա Մ Ս Ա Գ Ի Ր


**ԱԶԳԱՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ,
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ**



ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1877



ԱՊՐԻԼ



ՄԶԿԻԹ ՕՄԱՐԱՅ (ՀԻՆ Տ. ՍՈՂՈՄՈՆԻ)

ՅԵՐՈՒՍԱԼԷՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈՎԲԵԱՆՅ



ԲՏԱՍԱՆԵՐՈՒՄԻ ՏԱՐԻ

թիւ 4.

ԱՄՍԱԳԻՐ

ԱՊՐԷԼ 30

1877.

ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ . ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ա. Բ. Բ. Ա. Ն. Ա. Մ. Գ.

ԿԱԲՈՂԱՆՈՍ (*)

ՀԱՆԳՈՒՅԵԱԼ ՏԵՐ Սրբազան Եղի-
աղար Կաթողիկոսն զիւր ձեռնասուն
և զհաւատարիմ աշակերտն զՆիկի-
դայոս վարդապետն կարգեաց ձեզ
տեսուչ, և որ բարեպէս հովուելով
զձեզ տասն ամ հանգեաւ ՚ի Քրիս-
տոս. որ այժմ աղկերեւ տեսանի ար-
ձանագիր գերեզմանի ՚ի տապանս քա-
րին Եւ յետ այնորիկ կրկին խրթնացաւ
սուրբ Եկեղեցին ձեր ՚ի ձեռն անկար-
գութեան՝ զի երբեմն մուխաթածիք
տիրէին ձեզ երէց, կամ աշխարհա-

կոն, և երբեմն եկամուտք ոմանք և
անձանթք իբրու վարդապետք, որք
զբազում անկարգութիւնս. եւ զորիւ
նազանցութիւնս մուծին յԵկեղեցիս
ձեր, և այսպէս անշքեղացեալ սուրբ
Եկեղեցին ձեր իբրեւ այրի մնացեալ,
և դուք որբացեալ դեղերեցայք զամս
քսան և հինգ: Եւ ապա յետ այոքան
ամաց ողորմութեամբն Աստուծոյ ՚ի
Ռձկ թուին Սրբոյ Երուսաղէմայ Ծայ-
րագոյն նուիրակ գոլով եկի ես առ
ձեզ. եւ զգործն իմ աւարտեցի, եւ
բարձեալ որայիք անցեալ գնացի ըզ-
մնացեալ գործն իմ աւարտել: Իսկ այ-

(*) Շարունակութիւն և վերջ, տես թիւ 5.

նրմ Ժամանակի լուսահոգի Աստու-
ծատուր հոգեւոր Տէրն, որ արք եպիս-
կոսոս և ծայրագոյն նուիրակ սուրբ
Էջմիածնի 'ի վերայ բոլոր վիճակին մե-
ծի Բիւզանդիոյ . յայնմ ամի զՄեռոն
Թափն ես արարի 'ի քաղաքիդ . և ըզ-
սէրս բազումս եւ զանպատմելիս . եւ
ապա զինի սակաւ աւուրց մեծամեծք
և փոքունք, դուք և նախնիքն ձեր բա-
զում աղերսանօք խնդրեցիք զիս ձեզ
հովիւ և Առաջնորդ բարեպէս հովիւ
եւ կառավարել զձեզ ըստ օրինակին
Քրիստոսի և լուսատուին մերոյ սրբոյ
Հորն Քրիստոսի լուսաւորչին : Եւ ես
յաղթեցայ 'ի սէրն ձեր, ետու զանձն
իմ ծառայութիւն եւ մշակութիւն
սուրբ Յովհաննէս եկեղեցւոյն և հո-
վիւ անուանեցայ բանաւոր հօտիդ
Քրիստոսի, և հովիցի զձեզ ապահովս
պահելով 'ի հերձուածողաց և 'ի կեր-
պորանեալ սուտակոսպաս կարգաւո-
րաց . այսպէս եւ մնացի առ ձեզ 24
տարի : Եւ 'ի լրման ՌՁՁԳ Թուին բա-
զում սիրով և գթով, լալով և դառն
արտասուօք զամենեսանոց գրկախա-
ռըն սուրբ համբուրիւ 'ի մեծամեծաց
մինչեւ ցփոքունս շուրջ զձեօք փարե-
լով՝ բարեւ մնայ առնելով և օրհնե-
լով՝ և վասն ձեր աղօթելով, և զա-
ղթս սրբոցն, և զձերն, և սուրբ Յով-
հաննէս Աւետարանչի պսակաւոր Ե-
կեղեցին ինձ բարեխօս առնելով երկար
ճանապարհիս պաշտօր խնդրելով ան-
ջատեցայ 'ի ձէնջ : Եւ իբրեւ լցան ա-
ւուրք հարիւր բազում աշխատու-
թեամբ եկեալ հասի 'ի սուրբ Աթոռս
Էջմիածին . եւ տեսի զցանկալին հոգ-
ւոյս զՍրբազան եղբայրն իմ հոգելի
զՏէր Աբրահամ անապատաստուն Հայ-
րապետն, որ և ընկալաւ զիս համա-
պատիւ իւրն, և այլ աւելի :

Եւ ապա յետ ուխտի իմոյ կատա-
րելոյ կամեցայ ընդ իս եկող ուխտա-

ւորացն յետս չուել և գնալ 'ի սուրբ
Կարապետն ուխտ, և անտի՛անցանել
եւ գնալ 'ի վիճակն իմ 'ի Թրակիա .
բայց ոչ ետ թող սրբազանն իմ ասե-
լով թէ՛ դեռ եւս ոչ յագեցայ յեղ-
բայրանն սիրոյ քո :

Յայնժամ ես անճարացեալ զընդ-
իս եղեալն յղեցի, և մնացի 'ի սէր
Սրբազանին, և յետ ոչ սակաւ աւուրց
գնացի 'ի վանորայս 'ի սուրբ Խոր վի-
րապն, և 'ի սուրբ Գեղարդն եւ ե-
կեալ կրկին 'ի սուրբ Աթոռս գաի ըզ-
Սրբազանն իմ խոթացեալ 'ի մահիճս
հիւանդութեան . զոր և զկիս սակաւ
աւուրց հրաւիրեաց Կոչողն 'ի վերին
յԵրուսաղէմ ուր ինքն կամեցաւ . և
եւ մնացի որք իբրեւ մենացեալ : Եւ
այնուհետեւ 'ի կամացն Աստուծոյ և
հրաւիրմամբ բոլոր միաբանից, և հա-
մայն գաւառաց . Առաջնորդ, և Իշ-
խանք, աշխարհաժողով արարեալ կու-
տեցան 'ի վերայ իմ, որք և ընդունե-
ցին զիս 'ի գերաստիճան Կաթողի-
կոսութեան և 'ի ծառայութեան սուրբ
Իջման տեղւոյս, որ և յախամայ կա-
մօք անցուցին զմեծ և զանտանելի ըզ-
լուծ 'ի պարանոցս իմ . յորում ահա
կամ ապաւինեալ 'ի խնամս Աստու-
ծոյ ակն ունելով և ելիցն յաջողու-
թեան և փրկութեան :

Եւ արդ սիրելիք իմ, անձն իմ և
ոսկերք իմ, ահա ես մնացի աստ յա-
րեւելս կարօտ տեսութեանց ձերոց .
և թէպէտ կամիմ զձեզ տեսանել եւ
յայդ կողմունքդ գալ, զըօսանալ և
ուրախանալ, բայց չէ հնար, վասն որոյ
արժանի արաոյց Տէր 'ի դատաստա-
նին զմիմեանս տեսանել . բայց ձեր և
առանց մխիթարութեան առանց
հովիւի մնալն չէ պատշաճ . որպէս
փորձիւ ճանաչեցիք ըստ վկայութեան
Գրոց թէ՛ Մի մերձենայք յօծեալս իմ,
և 'ի մարգարէս իմ մի մեղանչէք, Եւ

սուրբ Աւետարանն Քրիստոսի հրամայէ թէ . Այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ, և ոչ ծանեար զիս Փիլիպպէ, Քանզի հրամայէ Հոգին Աստուած բերանով իմաստնոյն Սոգոմոնի պատուիրելով առ հոգեւոր հովիւս Եկեղեցւոյ սրբոյ ասելով՝ խելամուտ թեամբ ծանիւր զանձինս խաշանց ձերոց, և հաստատեցէր զսիրտս ձեր 'ի վերայ երամոց ձերոց . Եւ զի յայտ իսկ է Աստուածուսոյց բարեպաշտութեան ձերում, որ երամբանական խաշանց Ս. Եկեղեցւոյ դուք էք 'ի Քրիստոս : Ես այս նարդեանս հովիւ գտայ օրհնեալ հօտիդ, տառապեալ ձերութեանս մեր, որպէս գրեցաւ 'ի վերայ . վասն որոյ գիտութիւն լիցի ձեզ հաւատացելոյդ ըստ վկայութեան սուրբ Աւետարանին որ ասէ . Որ խնդրէ առնու, որ հայցէ գտանէ և որ բողոքէ բացցի նմա, որպէս և դուք ձեզն իսկ խնդրեցիք յօժար կամօք և բազմակիք մահուրով զնախապատրաստ Որդեակն իմ ձեռնասուն զՅովհաննէս վարդապետն 'ի տեղի իմ և արժան իսկ էր վասն Առաջնորդութեան . զի որովհետեւ օրէն է Աստուածային և սահման մահկանացու բնութեանս, ամենայն որդի հաւրադատ, ժառանգեն զոռն և զհայրենիս հօր իւրոյ : Այսպէս և այսու օրինակաւ ահա զսիրելի որդեակն իմ և զձեռնասուն զաւակն, զցուպ ձերութեանս իմոյ որ 'ի ձեռս ձեր անեալ է, և ինեւ վարժեալ զՏէր Յովհաննէս արք եպիսկոպոսն և ծայրագոյն վարդապետական իշխանութեամբ ճոխացեալ աշակերտն իմ բարձր հրամանաւ և անյաղթելի սուրբ Իշման տեղի Ծնորհիւն եւ իմով հայրապետական իշխանութեամբս հոգեւորական ներդործութեամբն հոգեւոր փեսայ հարսին Սիօնի, այսինքն սուրբ Յովհաննաւ Աւետարանի Եկեղեցւոյն ի.

մոյ հաստատեցի Առաջնորդ հովիւ եւ տեսուչ 'ի վերայ մայրաքաղաքիդ Թէքիրտաղու բարձրահայեաց սուրբ Յովհաննէս Եկեղեցւոյ, և շրջակայ թէմի և վիճակի դորին Թրակիոյ . որպէս գիտակ իսկ էք . նախ զվախճան լուստհոգի Կարապետ հոգեւոր տէրին, 'ի ՌՃՀԹ Թուրն յլեցի զգա 'ի սուրբ Աթոռս առնուլ զպատիւ գերաստիճան եպիսկոպոսութեան ըստ խնդրոյ իմոյ և հաճութեամբ ձեր ամենեցունցդ : Այնու յուսով զի մինչ կենդանի եմ ծառայեսցէ ինձ զգործ հոգեւոր մշակութեան և կատարեսցէ անձանձիր հնազանդութեամբ ըստ կամաց իմոյ : Նմանապէս և Սրբազանն իմ ետ վեկայական և կոնդակ արձանացուցեալ 'ի խնդրոյ իմոյ : Եւ այժմ ահա իմով իշխանութեամբն, եւ բարձրագահ սուրբ Աթոռոյս անյաղթելի և բուռն զօրութեամբ, եւ սուրբ Լուսաւորչի շնորհաբաշխ Աջոյ ներգործութեամբն պարգեւեցի որդեկիս իմոյ Յովհաննէս վարդապետին զքնիկ վիճակն իմ եւ զսթառ Առաջնորդութեան, որ 'ի Թէքիրտաղն . զի հովուեսցէ զձեզ և ուսուցանել զձեզ գնալ յօրէնս և 'ի պատուիրանս Տեառն անարատութեամբ և սրբութեամբ . տալով զանձնն իւր օրինակ բարեաց ամենեցուն :

Մանուանդ պահէլ զանձն իւր սրբութեամբ, արդարութեամբ և խոնարհութեամբ . առնելով ինքն և ուսուցանել զձեզ . պահելով զանձն իւր անբանբաս առ մարդիկ և անգատապարտ առ Աստուած : Եւ 'ի վերայ այսր ամենայնի լիցի այցելու և հայր որբոց և այրեաց, անանկաց և աղքատաց և լիցի ամենեցուն հոգեւոր եւ մարմնով ցաւակից և վշտակից սիրովն Քրիստոսի . և կոչեսցէ զիմաստունսն եւ զարժանաւորսն եւ զվկայեալսն 'ի կարգ և յաստիճան դպրութեան, կիւ

ասարկաւադութեան եւ քահանայութեան . կալցի հրամանաւ լմերով զառաքելաբար իշխանութիւն կապելոյ եւ արձակելոյ հղոր եւ բարձր հրամանաւ սուրբ Աթոռոյս , որ եւ առ ձեզ եկեալ երջանկափառ վարդապետական իշխանութեամբն քարոզեսցէ զբանն Աստուածային եւ ուսուցէ ձեզ զճանապարհս ճշմարտութեան . իրատեսցէ զստոհական , յանդիմանեսցէ զստամբական , ուղղեսցէ զթիւրեալսն եւ դարձուցէ զմոլորեալսն , սաստեսցէ զհակառակողն կանոնաց , կարկեսցէ զհերձուածողսն , եւ ջանասցէ ամենայնիւ զձեզ իբրեւ զկոյս մի սուրբ յանդիման կացուցանել Քրիստոսի : Այլ եւ զհոգեւոր նախանձ օրինացն Աստուածային եւ վրէժխնդրութիւն կանոնաց սրբոց Առաքելոց եւ Հայրապետաց անձին կրելով արեամբ չափ նահատակեսցի :

Վասն որոյ ընկալարուք զսա յայսմ հետէ մեծաւ սիրով եւ հնազանդութեամբ ճանաչեցէք զերախտաւորն իմ , եւ զընտանին ձեր . եւ մի երթայք զհետ օտարի . զի դիտէք ստուգիւ եւ դուք որ 'ի մանկութեան կրթեցաւ 'ի ձեռս իմ . եւ մինչեւ 'ի մահ եդ զանձն իւր 'ի վերայ իմ . որպէս եւ է մինչեւ ցայսօր . եւս յուսամ մինչեւ ցիկտ կոչմանս եւ յետ անցմանս . զի յիշատակ իմ լիցի . որպէս եւ 'ի ձէնջ յուսամ զի մեծաւ պատուով եւ գթով . մանաւանդ որ երեւելիք էք յանուանէ յատուկ բարեկամք մեզ եւ սուրբ Աթոռոյս , բարեպաշտօն իշխանք , եւ հանձարեղ թօլլաթաւորք . եւ ծերունիք ալեօք , ծաղկեալ քահանայք , եւ առ հասարակ ժողովուրդք ըստ իւրաքանչիւր կարգի , եւ ըստ պատուոյ պարտիք զսէրն որ առ ձեզն , առնել եւ որդեկիդ իմոյ Տէր Յովհաննէս վարդապետիդ Առաջնորդիդ ձերոյ :

Եւ յամենայնի 'ի կողմն ճշմարտութեան ճանաչելով թեւ թիկունք լի ջիւր . եւ ունիցիք դէս իբրեւ զիս որ է հոգեծին զաւակն իմ . որպէս եւ գիտէքդ իսկ : Եւ մի ոք իցէ ընդ իմացող եւ հակառակող դմա թէ քահանայից եւ թէ ժողովրդոց , զի որք ընդ զիմանան մեզ եւ սուրբ Աթոռոյս եւ սարսափելի սուրբ Իշման տեղոյս են հակառակք . նոյնպէս եւ հնազանդողքն մեզ եւ սարսափելի սուրբ Աթոռոյս են հընազանդք : Այլ եւ զառաքելաբար իշխանութիւն եւ զհրաման սաստելոյ եւ յանդիմանելոյ , կապելոյ եւ արձակելոյ , զի կապեալն 'ի դմանէ կապեալ եղիցի յերկինս եւ արձակեալն՝ արձակեալ 'ի յերկինս եւ 'ի յերկրի . նա եւս քըննութիւն առնել եւ այցելութիւն յամի յամի Եկեղեցւոյդ ձերոյ : Եւ շուրջակոյ թեմի եւ վիճակի դորին . այլ եւ որչափ հաս եւ իրաւունք գոն ըստ կանոնական հրամանացն , որք Առաջնորդականաց են իրաւունք , պարտիք տալ անորտունջ զնախասահմանեալն ըստ սովորութեան ձերոյ , եւ զոր ինչ քան զիմն յառաջ , եւ 'ի յիմումն ժամանակի զառաջնորդական իրաւունքն մի խանդարեալիք . որպէս լսեմ եթէ նախնեաց սովորութիւն , որ 'ի Հայաստանեսոյց Եկեղեցիս վարի , այսինքն ըզպաշտօնէից բաժանելն՝ խաբանել կամեցան ոմանք 'ի քաղաքիդ . եւ զայս բազումս այլալութիւն մուծին յեկեղեցին զոր ես սչ կամիմ զի մի քակեացին նախնի եւ հայրենական բարի արարողութիւն սուրբ Եկեղեցւոյ . եւ զոր ինչ նուէրք կայր սահմանեալ յիմն ժամանակի զնոյն սրտաւ իրեմ . զմահս եւ զկենացն , զտէրունականսն եւ զերաւխայրիսն , զօծմանն , եւ զտէրունիքսն , զհոգեբաժինսն , եւ զքառասնիցն , եւ զայլ կանոնեալսն 'ի սրբոց՝ զտէրունիք իրաւունքն սայլք 'ի ձեռն Առաջնոր-

դիւն ձերոյ անպակաս եւ մանաւանդ
ուրախ սրտիւ : Քանզի զտուրս զուար-
թըս եւ առաքա սիրէ Աստուած :

Աստանօր վերջ բանիս տեսանեմ ըզ
ձեր հնազանդութիւն եւ զորդիական
սէրն զոր ունիք առ իս եւ առ սուրբ
Աթոռս : Թէ որպէս յայտնեցէք
որդեկանիդ իմոյ Յովհաննէս վարդա-
պետիդ եւ Առաջնորդիդ ձերում : Այս
է զոր ասեմս հնազանդութեամբ եւ
հպատակութեամբ մեծաւ քաղցրա-
ցուցէք զսիրտ դորին : զի խնդու-
թեամբ հովուեսցէ զձեզ եւ ոչ հոգ-
ւոց հանելով , զի ես յորժամ լսիցեմ ,
ուրախանայեմ , ուրեմն ջանասցուք
միշտ կատարել զհրամանս Առաքելոցն
զոր ասէ . Հնազանդ լըրուք Առաջնոր-
դաց ձերոց , եւ հպատակ կացէք նոցա .
զի եւ ես յորժամ լսիցեմ ուրախանայ-
ցեմ . որպէս զի սիրով Հոգւոյն Սրբոյ
միացեալ հոգւով ընդ միմեանս կաց-
ջիք ընդ երկայն աւուրս եւ վայելես-
ջիք բարեաւ զաստիս . զի եւ անդ եւ ան-
պատկառ եւ զուարթ երեսօք եւ ու-
րախ դիմօք առեալ զձեզ կացուցանէ
ընդ աջմէ հովուապետին . եւ դատա-
ւորին ամենեցուն . առ որ ասիցէ Ա-
հաւասիկ ես եւ մանկունք իմ զորս եւ
տուր ցիս . եւ ասպա լուիցէ 'ի նմանէ .
Եկ ծառայ բարի եւ հաւատարիմ մուտ
ուրախութիւն Տեառն քո հանդերձ
մանկամբք քով . որում արժանաւորս
արասցէ զձեզ 'ի փառս անձառ ան-
ղըրաւ յաւիտեանս ամէն :

Գրեցաւ օրհնութեան Կոնդակս
'ի վերայ Թէքիտաղու վասն Առաջ-
նորդութեան ձեռնասուն որդեկանս
իմոյ Յովհաննէս վարդապետին եւ
ծայրագոյն Արք Եպիսկոպոսին 'ի Թը-
ւին Հայոց ՌՃԶԶ ին . եւ 'ի ամսոյն
Յունւարի մուտն . առ դրան Վեհա-
րանիս սուրբ Էջմիածնի յանյաղթելի
Աթոռոյ ամէն :

ՀԱՅ ԵՒ ԿԵԱՆՔ

Տէր , առ ով երթիցուք , բանս
կենաց յաւիտեանեաց ունիս :

Աստուածորդին Յիսուս իւր աշա-
կերտաց հետ մի օր երբ Կաթառնա-
յում կը գտնուէր , հրէայք հացի հա-
մար վէճ կը յարուցանեն եւ կ'ընկնին
վիճել Յիսուսի հետ այն հրաշքի հա-
մար , որով Յիսուս հինգ հացով եւ
սակաւ խնչ ձկով հինգ հազար հոգի
կերակրեց :

Հրէայք որովհետեւ չէին ուզէր հա-
ւատալ Յիսուսին իբրեւ Աստուծոյ որդ-
ւոյն , կ'ուզէին նորա գործած հրաշք-
ները եւս ուրանալ առ ոչինչ համա-
րելով՝ եւ նորա սիրտը վշտացունել .
ուստի կ'առարկէին թէ մեր հայրերը
Եգիպտոսէն ելելու ժամանակ , անա-
պատին մէջ քառասուն տարի յերկնից
իջած մանանայով կերակրուեցան . ու
րով ըսել կը կամէին թէ քու ըրածդ
ալ բա՞ն մ'է : Յիսուս անոնց կը սա-
տասխանէ թէ՝ յիրաւի ձեր հայրերը
քառասուն տարի կերակրուեցան յերկ-
նից իջած մանանայով , բայց մեռան .
իսկ իմ տուած հացս յաւիտեանեան է
եւ զայն ուտողը չք պիտի մեռնի : Հը-
րէայք չուզելով իմանալ Յիսուսի խօս-
քին զօրութիւնը եւ նիւթական հաց
կարծելով նորա ըսածը , կ'ուզեն որ
տայ իրենց անկէ , որպէս զի իրենք եւս
ուտելով հանգիստ ապրին . սակայն
Յիսուսի նպատակը ըստ որում մար-
դոց սիրտը , միտքը եւ հոգին երկրէն
վեր բարձրացնել էր , վասնորոյ եւ իւր
խօսքերն հոգեւոր էին . սակայն տես-
նելով որ Հրէայք չեն իմանար , կամ
չեն ուզեր իմանալ նորա Աստուածա-
յին նպատակը . կը պատասխանէ թէ
« Հոգին է կենդանարար եւ մարմին խնչ

ոչ օգնէ և այսինքն թէ մարմինը նիւթովան և անցուոր լինելով՝ ամենևին օգուտ չունի. նմանապէս և նիւթական հասցը՝ որով մարմինը միայն կ'ապրի՝ բոլորովին ոչինչ է և ոչինչ կ'օգտէ. իսկ հոգին՝ որ անմահ է, որ յուսեանալիս է և որ ամենեւին չ'ոչնչանար, նա է միայն կենդանութիւն տուողը և մարդոյ արժանիքը բարձրացնողը. հետեւաբար Յիսուսի տուած հացն ալ հոգեւոր էր, այն է իւր կենսատու խօսքերը, իւր Աստուածային քարոզութիւնները և իւր աւետարանական ճշմարտութիւնները: Սակայն չարաժիտ Հրէայք որոց միակ նպատակն էր բարերար Յիսուսի գթօտ սիրտը վրէտացնելու որ և է մի պատճառ գրտնել՝ այս տարապարտ վիճաբանութեան մէջ երբ կը տեսնեն իրենց նպատակի անյաջող ելլը՝ իբրև չը հասկացող Յիսուսի խօսքերուն՝ կը ցրուին անկէ. իսկ Յիսուս կը մնայ միայն իւր երկու տառան աշակերտաց հետ, որոց միայն համար եւս արդէն ըսած էր թէ «Մինքն ՚ի ձէնջ սատանայ է», ուստի միւս մետասան աշակերտաց կըսէ թէ դուք ալ կ'ուզէք երթալ, այսինքն՝ զիս թողուլ և ինձմէ հեռանալ. Յիսուսի այս հարցման, Պետրոս կը պատասխանէ. Տէր առ ո՞վ երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս ։

Մինչեւ հոս խօսածնիս եղելութեան համառօտակի պատմութիւնն էր, զոր աստ վերջացնելով, անցնիմք Պետրոսի սոյն խօսքին վրայ մի քիչ խորհրդածել։

Պետրոս որ Յիսուսի մէկ խօսքով, իւր ուսկանը և ձկնորսութեան ամեն գործինները թողած Յիսուսի ետեւէն գնացած էր մեծ յուսով, երբ կը լսէ Յիսուսի սոյն հարցը, զարմանք եւ սրտցաւութեամբ կը պատասխանէ թէ ո՞վ տէր մենք ո՞ւր երթանք, որո՞ւ եր

թանք, ի՞նչ տեղ և ի՞նչպէս երթանք. միթէ մենք քու մէկ հրաւիրմամբ ամենայն ինչ թողած քու ետեւէն չը վազեցինք, միթէ մենք զքեզ փորձելու և անգրէն յետս դառնալու համար եկանք. միթէ մենք քու Աստուածային քաղցրութիւնը եւ յաւիտենական երջանկութիւնը աշխարհի ամեն բարիքներին նախամեծար եւ գեր ՚ի վեր համարելով չէր որ քու ետեւէդ եկանք. իսկ արդ՝ այժմ ի՞նչպէս կարող ենք զքեզ թողուլ և քեզմէ հեռանալ և եթէ հեռանամք իսկ, ո՞ւր պիտի դիմեմք. եթէ երկրաւոր իշխաններուն դիմեմք, արդէն նոքա իւրենց իշխանական գահոյից վերայ կը տատանին և շուտ պիտի գլորին. եթէ թագաւորներու դիմեմք, արդէն շատ աշխարհաստան և տիեզերակալ թագաւորներ շուտով իրենց տիրած երկիրներու իշխատակաց տակ փոշիացած են. եթէ աշխարհի գիւնոց և իմաստնոց դիմեմք, արդէն նոցա ամենէն իմաստուններն իսկ իրենց վարդապետութեամբ և բարոյականով չը կարողացած մարդկանց հոգւոյն վրայ մի մեծ ներգործութիւն ընել եւ զանազան ապականութենէ ազատել. նոցա իմաստնագոյնն անգամ, արդէն զգալով այս մասին իւր անկարողութիւնը, խոստովանեցաւ հեթանոս աշխարհի մէջ թէ մինչեւ որ երկինքէն մարդ մը չիջնէ, կարելի և հնար չէ մարդկանց վերանորոգութիւնը և փրկութիւնը. Արդ՝ այն անակնկալ երկնային մարդը, իշխանաց իշխանը և թագաւորաց թագաւորը դու ես, ո՞վ տէր. ասոր լաւ համոզուած, հոգւով հաւատացած և սրտով քեզ հետ կապուած ենք, ի՞նչ պէս կարելի է ուրեմն որ զքեզ թողունք եւ քեզմէ հեռանանք, ո՞չ, ո՞չ բնաւ, անկարելի է այդ, որովհետեւ դու յաւիտենական կենաց խօսքեր ու

նիս, որք հոգի կը սնուցանեն, կը զօրացունեն, կենդանի կ'առնեն և յաւիտեն սկան կեանք կ'պարգեւեն, մենք այս ամենը տեսնելով քեզ մօտ ո՞վ տէր, ընդ նմին և ալս սրհի ունայնութիւնները ամեն օր, ամեն ժամ և ամեն րոպէ մեր աչքի՝ առաջ ներկայ ունենալով, ամենեւին չէ կարելի որ քեզ մէ հեռանալով՝ աշխարհի մօտինք, յաւիտենական անցաւորին և կեանքը՝ մահուան հետ փոխենք:

Այսպէս ահա հաւատարիմն Պետրոս՝ սիրահարած Յիսուսի յաւիտենական կենաց խօսքերուն և հոգւով ու մարմնով անոր փակած՝ չուզեր բնաւ զատուիլ և հեռանալ, սակայն որոնք են արդեօք այս յաւիտենական կենաց խօսքերն, որք այսքան սատոյի գրաւած են Պետրոսի սէրն և նորա սիրան ու հոգին, անշուշտ յայտնի է ամեն քրիստոնեայ մարդու, որ այն յաւիտենական կենաց խօսքը Սուրբ Աւետարանն է. ուր կը բովանդակին Յիսուսի բոլոր անօրէնութիւններն, նորա ամեն գործողութիւններն, նորա հրաշքները, նորա վարդապետութիւնները և բոլոր Աստուածային ճշմարտութիւններն, և արգարեւ Ս. Աւետարանն մի այնպիսի մատեան է, որոյ քաղցրութիւնը միայն ճաշակ ունեցողները կրնան զգալ, որուն համար կանխադէպն աղաղակած է Աստուծոյ սիրով, քաղցրութեամբ եւ անուշութեամբ լցուած սաղմոսերգու մարգարէն, թէ «Քաղցր են բանքքո Տէր ի քիմն իմ, քան զմեղու խորիսխ» և ահա սոյն քաղցրութիւնը զգացողք միայն կրնան Պետրոսի պէս աղաղակել Տէր առ ո՞վ երթիցուք:

Մենք ամենքս ալ սիրելի ընթերցողք, ըստ որում քրիստոնեայ եմք և ամենեւին տարակոյս չունիմք Ս. Աւետարանի և ոչ մի բառին վրայ, մենք

ամենքս ալ աշխարհի վրայ ապրելով՝ որովհետեւ զգացած ենք և կըզգանք միշտ աշխարհի դառնութիւնը, հարկ է որ ճանաչեմք Աստուածային քաղցրութիւնը և Յիսուսի քղանցք բռնելով աղաղակեմք Պետրոսին հետ, Տէր առ ո՞վ երթիցուք, և ինչ տեւական քաղցրութիւն կոյ աշխարհի վրայ, որ կարենայ հաւասարիլ Աստուածային քաղցրութեան և զմեզ առ ինքն ձգելով, հեռացնել Յիսուսէն, որ ամենեւին քաղցրութիւն, երջանկութիւն և հոգւոյ զմայլում է, ամենեւին ոչինչ չենք գտներ եթէ մարդկային ամեն վայրօքարչ կիրքերն և ունայն զգացումները մէկդի ձգելով խորին ուշադրութեամբ աշխարհի անցքերը նկատելու ինչինք միանգամ, բաւական է միայն եթէ աչքերնիս մեր շուրջը դարձնենք, ինչ պիտի տեսնենք, ուրիշ ոչինչ, բայց եթէ՝ պատրանք, վիշտ, զոհանք և մորմոք. կը տեսնենք ամեն օր, որ մեր սիրելիներն, մեր եղբայրները, մեր մայրերն ու հայրերը և մեր սրտի հատորներն անխնայ ի մահ կը մատնուին և մենք մեր ձեռքով կը պարտաւորինք զանոնք հողին աւանդել. կը տեսնեմք ծովներն ու հարուստները, որոց հարստութիւնը մի անյաջող զիպուածով յետին աղքատութեան կը փոխուի. կը տեսնենք թագաւորներ, գաւառներ և իշխաններ, որք հակառակ Աստուծոյ կամոյ, հակառակ իրենց կոչման եւ հակառակ իրենց նուիրական պարտաւորութեան ըստ հաճոյս կը գործեն և ըստ քմաց կը տնօրինեն, իրենց խնկարկունները փառաց ի փառս կը բարձրացունեն նոցա ամեն թերութիւնները իրենց իշխանական լայն վերարկուին տակ սքողելով, իսկ իրենց կամ իրենց սիրելեաց կոյր հպատակ չեղողները միշտ ռանհար կ'առնեն առանց քնն

նութեան , առանց օրինաց եւ առանց դատաստանի . չը կայ արդար եւ անաչառ Յիսուս մը որ լսէ զրկելոյն բողոքանայ . Յիսուսին յաջորդած է խոտասիրտ մարդն , որ իւր իշխանութեան փառքէն չլացած , ամբարտաւանութեան մեծամեծ խորհուրդներով անպատուութիւն կը համարի իրեն մի ստորին և աննշան հպատակի ձայնը լսել . սակայն շուտով կը խորտակի նոյա անբարհաւաճութեան եղջիւրն եւս իրենց բռնութեան գաւազանին հետ միասին , բաւական է քաղաքական մի անհեթեթ պատճառ , որ իրենց խարխուլ գահուն վերայէն թաւալգոր տապալէ դերենք . վերջապէս չը կայ բան մը աշխարհի մէջ , որոյ մատակարարած քաղցրութիւնը անկողորդ լինի դառնութեան և տեւականութիւն ունենայ . աշխարհի մէջ անխառն քաղցրութիւն այն ատեն կը դառնայ միայն , երբ բարութիւն և առաքինութիւն կը գործեմք . այն է , Յիսուսի պատուէրները կը կատարեմք . քանի որ այսպէս է , պէտք է սթափինք ուրեմն և զգամք Յիսուսի մատակարարած այն երկնաւոր և յաւիտենական հացի քաղցրութիւնը եւ անբաժան մնամք միշտ մեր Յիսուս Քրիստոսէն , որ մեր կեանքն ու բովանդակ երջանկութիւնն է :

Դ . Ս . Ծանօթան :



ՄԱՐԴ

ԱՐՅԱՔԻՆ ՄԱՐԴ

Զ . Զգացումն .

(Ծարուակութիւն , տես թիւ 2 .)

Նոխորդ գլուխներու մէջ նկարագրուած գործարանները խաղաղ անգործ կը լինին , եթէ չը ներգործուին աւելի բարձր կարողութենէ մը այսինքն , Զլային Դրո-նէն , որոյ պաշտօնըն է գրգռել սոյն գործարանները և վերջացնել կամ կանոնաւորել նոյա գործողութիւնները : Առանց սոյն բարձրագոյն կարողութեան մարդ անկարող է արտաքին առարկաներու վրայ զգացումն և տեղեկութիւն ստանալ . հետեւաբար անբաւական իսկ կամաւոր շարժում մի արտադրել . վասն զի սա իսկ է միայն Զգացման և կամեցողութեան կայարանը : —

Զգացման է այն կարողութիւնը , որով մարդ ընդունելով արտաքին իրաց ներգործութիւնները , անոնց այլ եւ այլ հանգամանաց վրայ գիտութիւն կամ ճանօթութիւն կ'ունենայ : Իսկ Կ-մեջդ-ն-ի-ն է այն կարողութիւնը , որով զգացուած պիտոյից համեմատ , յառաջ կը գան մարմնոյ տարբեր շարժումներն հանգիստ գտնելու կամ վտանգէ խուսափելու համար : Թէ այս կարողութիւնք և թէ մարդոյ ուրիշ մասնաւոր ընդունակութիւնները , ինչպէս են , ճաշակել , հոտոտել , լսել , տեսնել և այլն , կախումն ունին յատուկ գործարանէ մը , որ կը կոչուի Զլային Դրո-նի-ն :

Այս գործարանը սպիտակ կամ գորշագոյն մասնաւոր նիւթէ մը կը բաղկանայ , որ կակուղ և մուտ է , կենաց սկիզբները գրեթէ հոսանուա

կըլայ, բայց քանի որ մարդ դէպ ՚ի կատարելութեան հասակն յառաջանայ, նա եւս կրտսանայ իւր թանձրութիւնը։ Սա՛ երկու գլխաւոր մասեր կը ներկայացնէ՝ Ուղլային զանգուածներ կամ Զլային կէտերնէր և Զլային երկնէր կամ Զլէր, որք ճերմակ գունով, ծուծով և ամուր մաշկերով թերեր են և կեդրոններէն մարմնոյն չորս կողմը ճիւղանալով կը տարածուին։ Գարձեալ նկատելով իրենց կատարած պաշտօնը, երկու կարգի կը վերածուին, մին կը ծառայէ կամաւոր շարժման և ըզգացման և կը կոչուի Կենդանական Զլային խորթ և միւսն ակամայ շարժմանց և գործարանական կենաց կը վերաբերի և կը կոչուի Գործարանական կամ Գանգլիոնական խորթ։ Սոյն կարգերն եւս կեդրոնական եւ ճիւղաւոր մասերէ կը բաղկանան։

1. — Կենդանական խորթ. — Սորա կեդրոնական մասը կը բաղկանայ Բլէղէ, Յեփնդէղէ եւ Ողնայաթի ծոծէ, որք գանկէ և ողնայարի օղակներէն կազմուած ոսկրային պատեանի մէջ կը գտնուին և իրարու շարունակութիւն կրնան համարուիլ։

Բլէղէ՝ գլխոյ խոռոչին մէջ երեք հաս լրայէ լրայ մաշկերով պատուած և դրսէն սկաւառակով ամրացած է։ Արտաքուստ առաջին մաշկը՝ (dure-mère) ներքային, հաստատուն, թանձրը, սպիտակ և պիսակաւոր է, որ տեղ տեղ գանկի ոսկրին հետ միտնալով ամուր պատեան մը կը ձևւայրնէ. սորա ներքեւ կը գտնուի աւելի նուրբ և թափանցիկ երկրորդ մաշկը (arachnoïde) որ սարգիստայնի նմանութիւն ունի։ Իսկ սորա ներքին երեսը կը պատէ երրորդ ծակոտէն մաշկ մը (pie-mère), որմէ յետոյ կը գտնուի ըզեղի զանգուածը։ Բլէղը գլխոյն մէջ ճակատէն մինչեւ ծործո-

րակը տարածուած՝ ծուծի նման ճերմակ ու գորշ գունով, գրեթէ հաւ կը թաձել զանգուած մ'է, վերի ծայրը բաւական կանոնաւոր կամարած և երկու կողմերը սակաւ ինչ ճնշուած, իսկ վարի կողմը տափակցած է։ Մէջ տեղէն խորունկ հատուածով մը երկու կողմնական մասերու կամ Կէ-լլէղներու կը բաժնուի։ Ներքին կողմը բոլորովին ճերմակ և զանազան խոռոչներով է, որք արտաքնոյն հետ հաղորդակցութիւն ունին և կը կոչուին Բլէղի խորթ։

Յեփնդէղը կամ Փոքր Բլէղ՝ Բլէղի վարի գին դէպ ՚ի գլխոյն ետեւի կողմը զեանգուած եւ հազիւ անոր մէկ երրորդին չափ ծաւալ ունի։ Սա ըզեղէն հաստ մաշկով մը անջատուած և անոր նման ակօսածեւ ճեղքուածով մը երկու կողմնական մասերու բաժնուած է։ Ետեւի կողմը դէպ ՚ի վար միջին բլթակ մի եւս կ'որոշուի։ Իւր զանգուածը գորշագոյն եւ զուգահեռական ուղիղ ակօսներով բաղմաթիւ թերթերու բաժնուած է, որք խաւ ՚ի խաւ իրարու վրայ զիգուած կ'երեւին։ Իսկ ներքին կողմը կը տեսնուին սպիտակ երակային ճիւղանման բաժանումներ, որ Կենաց ծառ (arbre de vie) կը կոչուի։

Ողնայաթի ծոծէ՝ Բլէղի և յետնուղեղի շարունակութիւնն է, որ կրկին երկու նման ողնայարի անցքին մէջ երկարելով գաւակի ոսկրին մօտ ճիւղերու բաժնուած է։ Սա եւս կը բաղկանայ երկու տարբեր գունով ուղեղային նիւթերէ, արտաքինը՝ սպիտակ և ներքինը՝ գորշագոյն, որք պատուած են ըզեղի առաջին մաշկին շարունակութեամբ։ Բայց բուն նիւթը չօշափուած չէ մաշկով, այլ բաւական հեռու, որպէս զի վտանգ չը պատահի ողներու աստիկ շարժումներէն յա-

առջ եկած կծկմամբ կամ արձակմամբ :

Իսկ այս երեք կեղբորնական զանգուածներէն արձակուած ջրերը , որք զանոնք մարմնոյն զանազան մասանց հետ կը հաղորդակցեն , ընդ ամենը 43 զոյգ են : Վերի կողմէն 12 զոյգը՝ Լղեղի վարի գիւնէն և գանկի վրայ գըտնուած ծակերէն կ'ելան կ'երկարին և կը ծառայեն ընդհանրապէս գլխոյ վրայ եղած զանազան զգայարանաց : Մնացեալ 31 զոյգը՝ Ողնայարի ծուծէն յառաջ գալով , ողներուն միջոցներէն կըրկին արմատներով կ'ելան , կ'երկարին և կը ծառայեն վարի և վերի անդամոց ու մարմնոյն ուրիշ կամաւոր շարժումն ունեցող մկանանց շարժման և զգալութեան :

2.—Գործարանական կամ Գանգլիոնական կարգ :— Այս կարգը կը բաղկանայ ուղղային փոքրիկ որոշ զանգուածներէ , որք նոյնատեսակ նիւթէ երկղներով միացած են միմեանց հետ եւ ողնայարի վերին ծայրէն մինչեւ կոնքը ձգուած են ողնայարի առջեւի երկու կողմերէն , բայց նաեւ ուրիշ կողմեր ալ , ինչպէս սրտին և ստամոքսին մօտերը կը գտնուին : Ասոնցմէ արձակուած ջրերն կամ թերերը շնչառութեան գործարաններուն և փորոտեաց չորս կողմերը ցանցի նման հիւսուածքով տարածուելով , կը հասնին մինչև թոքերը , սիրտը , ստամոքսը , աղիքը , վերջապէս մարմնոյն բոլոր ախամայ շարժման մկանները և սննդեան գործարանները . ասոնք մարդոյ տնկական մասի , այսինքն սննդեան գործարաններուն կը ծառայեն , մինչդեռ Ողնայարի և Լղեղի ջրերը մարմնոյն կենդանական մասի գործարաններուն այսինքն Զգացման և Շարժման կ'օգնեն : Երբեմն մարդոյ վերայ Գանգլիոնի ազդեցութիւնը այն աստիճան կը զօրա-

նայ , որ կենդանական մասին հանգչած ատեն , որ քունի վիճակն է , Տնկական մասը աւելի զօրուոր գործելով Քնքի ըսուած վիճակը յառաջ կը բերեն , յորում ըղեղի պաշտօնը Ստամոքսին կ'անցնի և մարդ կը ծաշակէ , կը լսէ , կը խօսի , կը տեսնէ և կը շրջի , առանց իւր ինչ վիճակի մէջ լինելը զգալու : Այս վիճակը ստորին աստիճանի կենդանեաց վիճակ և հիւանդութիւն մ'է , յորում բնազդումը պայծառ իմացման տեղ կը տիրէ և գործել կուտայ :

Ասոնք են ընդհանուր Զգացման գործարանները , որով մարմնոյն չորս կողմը տարածուած ջրերուն միջոցաւ արտաքին ազդեցութիւնները ընդունուելով մինչև Լղեղը կը հասնին , ուր և կը կատարուի իմացումն : Բայց , ինչպէս տեսնեք , մարմնոյ բոլոր ջրերը միայն զգացման չեն ծառայեր , այլ ու մանք եւս մկանանց շարժումն ներգործելու և ոմանք ալ Մենդեան գործարանները գործողութեան ենթարկելու պաշտօնը ունին , որք իրարմէ անջատուած իւրաքանչիւրն կանոնաւորապէս կը հաղորդեն իրենց պատշաճ ներգործութիւնները , առանց միմեանց հետ խառնակելու : Այնպէս որ զգացման ջրի մը տկարութիւնը կամ թերութիւնը միայն զգացումը հաղորդելու անկարող կը լինի , առանց շարժման կամ սննդեան գործողութեանց մէջ խանգարումն պատճառելու : Իսկ շարժման կամ սննդեան ջրի մը պակասութիւնը կամ վտանգը միայն շարժման կամ Մենդեան մէջ տկարութիւն կամ անգործութիւն կը պատճառէ , առանց զգացման վրայ թերութիւն մը ներգործելու : Նոյն իսկ զգացման ջրերուն մէջ , ինչպէս նաեւ միւս տեսակի ջրերուն , ամենուն գործը նոյնատեսակ չեն , այլ զգացման զանազան տեսակները , շօշափելն , ծաշակելն ,

հոտոտելն, լսելն և տեսանելը, իրենց յատուկ ջղերն ունին, որք ուղղակի մարմնոյն որ և է կողմէն չեն կրնար ոտանալ իրենց յատուկ ազդեցութիւնը, այլ միայն իրենց մասնաւոր գործարանաց միջոցաւ, որք Զգայարանք կը կոչուին:

Մարդոյ զգայարանները հինգ հատ են՝ Ծաղիկէի, Զաշիկէի, Հոգոթիկէի, Տեսալիկէի և Լսիկէի:

1. — ԾՕՇԱՓԵԼԻԻ. — Ծօշափման զգալութիւնն է այն կարողութիւնը, որով մարդ կ'ընդունի արտաքին մարմնոց և ջերմաստիճանի մարմնոյն վրայ ըրած զանազան ազդեցութիւնները: Սոյն զգայութիւնը երկու կերպով կը կատարուի՝ Կրաւորաբար, երբ արտաքին իրերը կը դաչին և կը ներգործեն մեր վրայ, և Ներգործաբար կամ Կամաւոր, երբ մեք կը շօշափեմք իրերն կամաւ, նոցա վիճակը, տարածութիւնը, ձեւը, ջերմաստիճանը, մակերեւոյթի տեսակը, ծանրութիւնը և այլն, զննելու և իմանալու համար: Ծօշափման զգայարանը մարմնոյն չորս կողմը պատող մորթին է, որ ինչպէս նախորդ գլուխներու մէջ տեսանք, երկու բարակ խաւերէ կը բաղկանայ, ներքինը աւելի նուրբ և զգայուն, իսկ արտաքինը կէս-թափանցիկ և անզգայ և մարմնոյն զանազան կողմերը տարբեր հաստութեամբ: Մորթին ներքին երեսին վրայ կը վերջանան բիւրաւոր ջղերու ծայրեր, որք ստացուած ներգործութեանց իբրեւ հաղորդիչ կը ծառայեն. ստացուած ներգործութեան քանակութիւնն ալ կախումն ունի մորթի նրբութենէն և ջղերութիւնէն: Կամաւոր շօշափումը աւելի ձեռաց միջոցաւ կը կատարուի, որոյ մասերուն գիրքը, յօգուածները, մորթին նրբութիւնն և դիւրզգայութիւնը, մանաւանդ մասերուն ծայրերը

գտնուած բշտիկները, ջղերու բաղմութիւնը և փափկութիւնը, ամենաթեթեւ շօշափումներն ու ներգործութիւնները զգալի կ'ընեն անմիջապէս: Վերջապէս շօշափման գործարանը այն աստիճան կատարեալ է մարդոյ վերայ, որ հին և նոր իմաստնոց ոմանք համարած են զայն օգտակարագոյն քան տեսութեան եւ լսողութեան գործարանները: —

2. — ԶԱՇԱԿԵԼԻԻ. — Զաշակումը շօշափման տեսակ մ'է, որ մասնաւոր գործարանի միջոցաւ ընդունուած մարմնոց քիմիական մէկ յատկութիւնը, այսինքն նոցա համը կը զգացնէ մեզ: Սուրա գործարանը Լեզուն է, բերնի խոռոչին մէջ վերի կողմէն ոսկորի մը հետ միացած, իսկ վարի ծայրը ազատ եւ ամեն կողմ շարժական: Լեզուն մնուտ մարմին մ'է մաղասաւոր նուրբ թաղանթով մը պատուած. վրայի դին անթիւ մանր սղակունքներով և ջիւղերով ստան անհամար ջղերով, յորոց ոմանք շարժման եւ ոմանք համի ազդեցութիւնը րզնդին հաղորդելու կը ծառայեն: Բայց բերնի մէջ ընդունուած նիւթերը համ տալու համար հեղուկ և կամ լուծելի ըլլալու են, որպէս զի բերնի շղիքով թրջուելով համ մը տան. չոր նիւթերը համ չեն տար. նոյնպէս երբ լեզուն բերնի շղիքով թացուած չըլլայ, ինչպէս կը պատահի երբեմն հիւանդութեան ժամանակ, համ չառքիչ կը ստացուի: Մարդոյ սոյն գործարանն եւս միւս բոլոր կենդանեաց գործարաններէն կատարելագոյն է: —

(Ծաղոնալիկէի)

ԲՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԵՒ ՏԻԵԶԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՊԱՐԶ ԽՕՍԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱՅՍ Գործը, ինչպէս վերնագիրէն կ'երեւի, ընտանեկան դիւրիմաց ոճով, տրամախօսութեան ձեւով և զուարճալի եղանակաւ աստիճանաբար կը սորվեցնէ մանկանց Բնագիտութեան եւ Տիեզերագրութեան կարեւոր և օգտակար ուսմանց կարեւորագոյն մասերը:

Այս երկասիրութիւնը կրնայ օգտակար ըլլալ ոչ միայն իբրեւ դասագիրք՝ Հայ-մանկուոյն, այլ և իբրեւ ընթերցանութեան գիրք՝ Ժողովրդեան և ի մասնաւորի ուսումնատենչ օրիորդաց և որդեսէր մարց, որք կարեն մեծապէս օգտիլ սոյն աշխատասիրութենէն եւ զիրենք շրջսպատող մատաղահաս մանկուոյն ընդաբոյս հետաքրքրութիւնն ու բնածին հարցասիրութիւնն արգիւնաւոր կերպով գոհացնել:

Այս նպատակաւ ձեռնարկեցինք սոյն Գործը մաս առ մաս ֆրանսերէնէ թարգմանելով՝ Սիճի ընթերցողաց ընծայել, յուսալով որ հաճելի և շահաւոր կը ըլնի ուսումնասէր աղգայնոց:

Մ. Ս. ՅԻՎԵԻԱՆ:

ԳԼՈՒԽ Ա.

ԲՆԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՔ

Զոր օրիորդ ԹԱԳՈՒՀԻ կ'առաջադրէ բացատրել:

ՕՐԻՈՐԴ ԹԱԳՈՒՀԻ. — Եթէ կ'ուզէք սա մամուռին վրայ քիչ մը հանգստանանք:

ՄԱՐԻԱՄ. — Աւելին չեմ ուզեր, օրիորդ, վստն զի մեր ըրած երկայն շորջագայութիւնը՝ զիս բաւականաչափ յոգնեցուց:

ՕՐ. ԹԱԳ. — Նստինք ուրեմն:

ՄԱՐ. — Ի՞նչ գեղեցիկ օդ, սրճափ կապոյտ է երկինքը:

ՅԱԿՈԲ. — Տաք է, բայց հով կայ:

ՕՐ. ԹԱԳ. — Զէք փափաքիր գիտնալ թէ ուրկէ՞ կ'ուգայ այս հովը, որ ըզձեզ կը զովայնէ եւ ուր կ'երթայ, ինչո՞ւ երկինքն այսօր կապոյտ է և ինչո՞ւ երբեմն, օրինակի համար երեկ, բոլորովին ամպով ծածկուած: Ուրկէ՞ կ'ուգան այս ամպերը, ի՞նչ են և ուր կ'երթան: Ինչո՞ւ սա մեր ոտքին տակ տեսնուած գետը անընդհատ կը հոսի: Ինչո՞ւ անոր ջուրը կապոյտ է, մինչդեռ բաժակի մը մէջ անգոյն կ'երեւի: Ինչո՞ւ համար հասած պտուղները ծառերէն կը թափին: Ինչո՞ւ փոթօրիկներ տեղի կ'ունենան փայլատակումներով և որոտումներով: Ինչո՞ւ համար ամառ կ'ըլլայ, երբ ջերմութիւնն ըզմեզ հեղձամղձուկ կ'ընէ եւ ձմեռ, երբ ցուրտն զմեզ կը սառեցնէ: Ինչո՞ւ ցորեկ և գիշեր կ'ըլլայ: Ինչո՞ւ որչափ ալ երկրիս վրայ քայլենք, բնաւ անոր ծայրը չենք հասնիր: Ինչո՞ւ...

ՄԱՐ. — Միթէ կարելի է որ մարդ այս ամենը գիտնայ:

ՕՐ. ԹԱԳ. — Այո, և տակաւին ուրիշ շատ բաներ:

ՄԱՐ. — Կը հաճի՞ք զանոնք մեզ բացատրել:

ՕՐ. ԹԱԳ. — Կը փափաքիմ նոյն իսկ այս օրէն սկսիլ և եթէ ձեզ շահաւոր ըլլայ, ուրիշ անգամ ալ շարունակել:

ՅԱԿ. — Դուք ինչէ՞ն գիտէք:

ՕՐ. ԹԱԳ. — Այս ամենը գիտողութիւններով եւ խորհրդածութիւններով գիտցուած է, այս ամեն բաներուն եւ առաջին ակնարկով անհասկանալի կարծուած այս ամեն փոփոխութեանց պատճառները գտնուած են: Այս փոփոխութիւնները՝ Բնական երեւոյթի կը կոչուին:

ՄԱՐ. — Ո՛ր գտած է ասոնք :

ՕՐ. ԹԱԳ. — Բազմաթիւ անձինք քա-
նի մը բաներ գտած են, իւրաքանչիւր
որ իւր նախորդաց եւ այլոց արդէն
գտածներէն օգուտ քաղելով, և այս
ամեն դիւտերը՝ մատենաներու մէջ
գրուած են, որք Բնագիր-Եւան և Տիե-
ղեազիր-Եւան գրեանք կը կոչուին :

ՅԱԿ. — Երբ գրեանց մէջ ինձ ան-
հասկանալի բառեր գտնուին, ինչպէս
են ձեր ըսածները, նոյն գիրքերը զիս
կը ձանձրացնեն :

ՕՐ. ԹԱԳ. — Կը վստահացնեմ՝ զձեզ,
որ այլ ևս այս բառերը չը պիտի կրնի-
նեմ ձեր առջեւ մինչեւ որ դուք ինք-
նին չը խնդրէք :

ՅԱԿ. — Երբէք չը պիտի խնդրեմ :

ՕՐ. ԹԱԳ. — Տեսնենք :

ՄԱՐ. — Օրիորդ, ինչո՞ւ համար քիչ
մ'առաջ ըսիք որ, եթէ մէկը երկը-
րիս վրայ շարունակ քալէ, բնաւ անոր
ծայրը չը հասնիր. ասոր պատճառ
երկրիս խիստ մեծ ըլլա՞ն է արդեօք :

ՕՐ. ԹԱԳ. — Ո՛չ, այս չէ պատճառը,
զոր պիտի բացատրեմ ձեզ. բայց ա-
հաւաստի արեգակը մեր վրայ եկաւ,
և կը նեղէ զմեզ. եթէ կամիք, տեղեր-
նիս փոխենք, երթանք մօտակայ ծա-
ռին շուքը նստինք, ուր աւելի հան-
գիստ պիտի ըլլանք և մեր խօսակցու-
թիւնը շարունակենք :

ԳԼՈՒԽ Բ.

ԵՐԿԻՐ

Հորիզոն. — Ձեռ. երկրի. — Ապացոյցք եր-
կրի կտրուութեան. — Մակերևոյթ եր-
կրի. — Ովկիանոս. — Յամաք. — Ընդերք
երկրի. — Երկրաշարժք. — Լ. երկնք. — Հրա-
բուխք :

ՕՐ. ԹԱԳ. — Երեկ, երբ այդ վարը
նշմարուած գիւղն էինք եւ նոյն գիւ-

ղէն այս բլուրը կը նկատէինք, ուր ենք
այժմ, մեզ այնպէս կը թուէր թէ այս
բլուրն աշխարհիս վերջն է, ուրիշ ան-
գին ոչինչ չէինք տեսներ բաց ի եր-
կինքէն. բայց այսօր, որ հոս ենք, ըզ-
մեզ չը ճապատուած կը գտնենք դաշ-
տերէ, մարգերէ, միով բանիւ եր-
կիրներէ, ճիշդ այնպէս ինչպէս գիւղին
մօտ գտնուած ժամանակնիս. և եթէ
այժմ զմեզ չը ճապատող այս դաշտաց
մէջէն, հոգ չէ թէ մը կողմն ըլլայ,
մինչեւ այն տեղն երթանք, ուրիշ ան-
գին կարծենք թէ բան մը չըկայ, երբ
հոն հասնինք, դարձեալ զմեզ չը ճա-
պատուած պիտի գտնենք դաշտերէ,
մարգերէ, միով բանիւ երկիրներէ, ճիշդ
այս տեղին պէս, և այսպէս շարունակ,
ամեն անգամ որ տափարակ գետնի մը
վրայ գտնուինք, միշտ այնպէս կար-
ծենք թէ՛ երկիրը՝ կտրի մը կամ բու-
րրակի մը ձեւն ունի եւ թէ՛ մենք
նոյն բոլորակին մէջ տեղն ենք, որոյ
եզրերը Հրդեհն կը կոչուին : Որչափ ալ
առաջ երթանք, երբէք չենք կրնար
այս հորիզոնին հասնիլ, որ գիտողին
տեղափոխութեան համեմատ ինքն ալ
կը տեղափոխուի :

Եթէ կամիք, վաղը կառք մը բռ-
նենք, և վարը, ամենէն հեռուն նըշ-
մարուած լեռն երթանք, որ այս տե-
ղէն մեր հորիզոնը կը կազմէ, և պիտի
տեսնէք որ երբ հոն հասնինք, ճիշդ
ասոր նման կըսը՝ նոր հորիզոն մը պիտի
ուենենանք :

ՄԱՐ. — Ուրեմն, միշտ մեր շուրջը՝
կըր հորիզոն մը կայ :

ՕՐ. ԹԱԳ. — Երբ մեզ խիստ մօտ պատ-
մը, կամ տուն մը, կամ ծառեր եւ
կամ լեռ մը գտնուի. յայտնի է որ
այն կողմէն նոյն պատը կամ նոյն տու-
նը, կամ նոյն ծառերը և կամ նոյն լե-
ռը մեր տեսութիւնը կը խաբանեն և
կ'արգիլեն իրենց ետեւն եղած հորի-

գոնը տեսնել, ինչպէս որ վարագոյր մը
իւր ետեւն եղածները տեսնելու ար-
գելք կ'ըլլայ, բայց տափարակ գետնի
մը վրայ, ուր տեսութիւնը խաբանող
արգելք մը չըկայ, միշտ կըր հոն
րիզոն մը կ'ունենանք, և այս հորիզոնն
այնչափ մեծ կ'ըլլայ, որչափ մեր կե-
ցած տեղը բարձր ըլլայ, ինչպէս, երբ
գաշտի մը մէջ ըլլանք, մեր շուրջը մեծ
տարածութիւն մը չենք տեսներ, բայց
եթէ լերան մը վրայ ելնենք, անոր կո-
ղին մէջ տեղը հասած ժամանակ՝ հո-
րիզոնն արդէն աւելի մեծցած կ'ըլլայ,
եւ երբ կատարն հասնինք, հորիզոնն
ալ աւելի կը մեծնայ և միշտ կըր կ'ըլ-
լայ :

ՄԱՐ. — Ձեր ըսածներն անհասկա-
նալի են :

ՕՐ. ԹԱԳ. — Բնաւ երբէք, երբ մը
տածէք, որ երկիրս կըր է :

ՅԱԿ. — Երկիրս կըր է :

ՕՐ. ԹԱԳ. — Գնտակի մը նման :

ՅԱԿ. — Բայց լեռներն ու ձորերը
չեն թողուր որ գնտակի մը պէս կըր
ըլլայ, կամ թէ այն ատեն, բոլորովին
խորտուբորտ գնտակ մը պիտի ըլլայ :

ՕՐ. ԹԱԳ. — Երկիրն այնչափ մեծ է
լերանց բաղդատմամբ որ լեռներն
ու ձորերը չեն կրնար երկրի վրայ բար-
ձրութիւններ և խորութիւններ կազ-
մել և անոր կըրութեան արգելք ըլ-
լալ, ինչպէս որ նարնջի մը կ'եղելին
վրայի խորտուբորտութիւնները՝ նա-
րնջին կըրութեան արգելք չեն ըլլար :

ՄԱՐ. — Բայց ինչէն գիտցուած է
երկրիս կըրութիւնը :

ՕՐ. ԹԱԳ. — Նախ՝ այս կըր հորիզոնէն
յայտնի կ'ըլլայ, մենք նարնջի մը վրայ
գտնուած մըրջիւնի մը կընմանինք, մըր-
ջիւնն իւր հասակի կարծութեան պատ-
ճառաւ մէկ անգամէն նարնջին մէկ
փոքրիկ մասը միայն կը տեսնէ, այս
փոքրիկ մասը, որոյ մէջ տեղն ինքը կը

գտնուի, կըր է. եթէ մըրջիւնն սկսի
քալել, հոգ չէ թէ որ կողմն ըլլայ,
իւր հորիզոնն ալ նարնջին վրայ կը փո-
խուի, ինչ համեմատութեամբ որ քա-
լէ, նոյն համեմատութեամբ նարնջին
մէկ նոր մասը կը տեսնէ, բայց այս ան-
սած մասը միշտ կըր է, սրովհետեւ
նարնջը կըր է, մըրջիւնն այս կերպով
կրնայ շրջան մ'ընել նարնջին վրայ և
գարձեալ մեկնած կէտը վերագա-
նալ : Նոյնպէս մենք երկրի բաղդատ-
մամբ այնչափ փոքր ենք, որ մէկ ան-
գամէն, երկրիս մէկ փոքրիկ մասը մի-
այն կը տեսնենք և այս մասը կըր է,
որովհետեւ երկիրս կըր է : Ահաւասիկ
թէ ինչո՞ւ համար երկրիս վրայ շարու-
նակ կրնանք քալել առանց երբէք ա-
նոր ծայրը գտնելու : Ճանապարհորդ-
ներ այս շրջանը կատարեցին եւ գար-
ձեալ իրենց մեկնած կէտը վերագար-
ձան : Ուրիշ գիտողութիւններ ալ կան
տակալին, որոնք շատ լաւ կ'ապացու-
ցանեն երկրիս կըրութիւնը :

ՄԱՐ. — Ի՞նչ գիտողութիւններ :

ՕՐ. ԹԱԳ. — Նաւերու մեկնելը տե-
սած էք :

ՄԱՐ. — Այո՛ :

ՕՐ. ԹԱԳ. — Շատ լաւ, դուք գի-
տած էք, որ նաւու մը ստորին մասն
աներեւոյթ ըլլալէն վերջն ալ երկար
ժամանակ առագաստները կ'երեւին :

ՅԱԿ. — Այո՛, ճիշդ է. ինչո՞ւ :

ՕՐ. ԹԱԳ. — Տուէք ձեր լսափիլէ գըն-
տակը և անմիջապէս այս թղթով փոք-
րիկ նաւ մը շինեցէք : Եղա՛ւ : Շատ
լաւ : Տուէք : Տեսէք, այս փոքրիկ նա-
ւին մէջ գնտասեղով վարդի թերթ մը
տնկեցի իբրեւ առագաստ : Ահաւա-
սիկ մեր մեկնելու պատրաստ նաւը,
նայեցէք : Զայն գնտակին վրայէն կը
սահեցնեմ : Որչափ որ հեռանայ, ա-
ռաջին անգամ ստորին մասն աներե-
ւոյթ կ'ըլլայ, և յետոյ առագաստը :

Ուրիշ առաջ կու գայ այս արդիւնքը :
— Գնտակին կըրուծենէն :

Նոյնպէս երբ ուղիանոսի մը վրայ ստհող մեծ նաւ մը տեսնէք, եթէ ուլ կիանոսը տափարակ ըլլար, նաւն ամբողջապէս պիտի նշմարէիք այնչափ երկար ատեն, որչափ ձեր աչքը զօրէր. բայց ընդհակառակը, այնինչ ձեր աչքը տակաւին կը զօրէ տեսնել, ուղիանոսի կըրուծիւնն արդէն անոր ըստորին մասը ձեր տեսութենէն կը ծածկէ և հուսկ ուրեմն առագաստներն աներեւոյթ կ'ըլլան, մեր փոքրիկ ձերմակ նուազին վարդէ առագաստին նման :

ՄԱՐ. — Բայց ուղիանոսն երկիր չէ :

ՕՐ. ԹԱԳ. — Ծովու ջուրը՝ երկրիս մակերեւոյթին մեծ մասը կը ծածկէ և անոր հետ ամբողջ մը կը կազմէ : Օրիւնակի համար ձեր լաստիկէ գնտակին վրայ մատով կոխելով՝ փոս մը կը չինեմ, դիցուք թէ այս փոսը՝ ջրով լեցուն ըլլայ, այն ջուրը գնտակին վրայ ծով մի պիտի ներկայացնէ և գնտակին կըրուծեան արգելք չը պիտի ըլլայ : Այսպէս ալ ծովերու ջուրը երկրի կըրուծեան արգելք չը կրնար ըլլալ :

ՄԱՐ. — Երկիրը շատ մեծ է :

ՕՐ. ԹԱԳ. — Երեք կամ չորս քաղաքներ և յիսնի չափ գիւղեր զիրենք չըլլապատող դաշտերով մէկուեղ, (որոց մէջէն ստիպուած ըլլայ մարդ անցնիլ մէկ գիւղէն միւսը երթալու համար), գրեթէ նահանգ մը կը կազմեն : Այսօր Ֆրանսայի մէջ գրեթէ մի և նոյն մեծութեամբ 86 նահանգ կայ : Եթէ Ֆրանսայի մէկ ծայրէն մինչեւ միւսը ճանապարհորդած ըլլայիք, կրնայիք անոր ամէն կողմէն ունեցած տարածութեան վրայ գաղափար մը ունենալ : Գրեթէ Ֆրանսայի տարածութեան 1000 անգամը պէտք է երկրի մակերեւոյթը ծածկելու համար :

Երկրիս մակերեւոյթին երեք քա-

ռորդը՝ ծովերով ծածկուած է : Ենթադրեցէք որ ձեր լաստիկէ սնամէջ գնտակը մէջ տեղէն երկու հաւասար կտոր ընեմ և այս կէտերը տարածելով՝ անոնց վրայ ցամաքներն ու ծովերը նրկարագրեմ : Մէկ կէտին մեծ մասը, ինչպէս կը տեսնէք, գորշագոյն է, որոյ վրայ գրուած են Եւրոպա, Ասիա, Աֆրիկէ, Ամերիկա, ասոնք ցամաքները, կամ երկրի մեծ տարածութիւններն են : Մինչդեռ մնացեալ ձերմակ մասը՝ ջուրը կը ներկայացնէ : Ձեր գնտակին վրայ այսպէս տարբեր գոյներով ցամաքներն ու ծովերը նշանակելէս յետոյ՝ գնտակին երկու կէտերուն եզրերն իրար կը մօտեցնեմ և սօսնձեւով՝ գնտակին դարձեալ իւր առջի ձեւը կուտամ : Այնպէս կերպով երկրագունդը ներկայացնող մանրանկար գրնտակ մը կ'ունենաք, որով կրնաք ցամաքի մակերեւոյթին կամ տարածութեան՝ ջուրերու մակերեւոյթին կամ տարածութեան հետ ունեցած վերաբերութեան վրայ գաղափար մ' ունենալ :

ՅԱԿ. — Երկրին խորը, իւր ընդերքին մէջ ինչ կայ :

ՕՐ. ԹԱԳ. — Կը կարծուի թէ՛ մեր օտից տակ բորբոքող սաստիկ ջերմութեամբ լուծուած մետաղներ կան. այս մետաղները և ուրիշ ամեն տեսակ եռացած կամ հրաբորբոք նիւթերը՝ քանի մը տեղեր մինչեւ երկրի կեղեւը կ'ենեն և զայն բարձրացնելով՝ լեռներ յառաջ կը բերեն : Պէտք է քաջ գիտնոր, որ այս բաները՝ առանց երկրի ահաբեկ սասանմանց, որք երկրաշարժ կը կոչուին, չեն կատարուիր Ուրիշ տեղեր այս հրաբորբոք նիւթերը՝ ոչ թէ միայն երկրի կեղեւը կը բարձրացնեն, այլ և զայն կը պատռեն և իրենց գործած բացուածքէն՝ դուրս կը ժայթքին : Այս կրակահոս լեռները

հրաբուռ-դէ կը կոչուին, և իրենց բա-
ցաւածքները՝ խառնարան: Օրինակի հա-
հար, իտալիայ մէջ Վեսուվ լեւոյ, որոյ
շխուներկու արտահոսումն, այսինքն
շխուներկու անգամ կրակ ցայտեցը-
նելը, ծանօթ է, թերեւս հին ատեն-
ներն ուրիշ արտահոսումներ ալ ու-
նեցած ըլլայ, որոնք անծանօթ են մեզ:
Մեզ ծանօթ եղած այս արտահոսմանց
առաջինը՝ Քրիստոսի եօթանասունը ինը
թուականին տեղի ունեցած է. ուրե-
մէն հազար ութը հարիւր տարի կայ
որ այս հրաբուռը շատ մը քաղաքներ
կործանած է. իւր վերջին արտահո-
սումը՝ յետին ժամանակներս տեղի ու-
նեցաւ, որոյ վրայ հաւանօրէն խօսուի-
լը լսած էք: 1872 Ապրիլ ամսոյն մէջ
Վեսուվ լեւան մօտ գտնուող մարդ
մը կը պատմէր թէ՝ սոսկալի մանչիւն-
ներ և սրտման ձայներ լսուած էին:
Երկիրը կը սասանէր, լեւան կողին վը-
րայ վիհ մը կը բացուէր և այս անհե-
ղեգ բերնէն՝ տարօրինակ զօրութեամբ
մը հրոյ եւ ծխոյ սիւն մը դուրս կը
ժայթքէր, որ չընկայ երկրիները մեծ
տարածութեամբ ծածկեց: Բաղմա-
թիւ անձինք սպաննուեցան կամ վի-
րաւորեցան եւ հրաբուռին արտա-
սահոսումը՝ շատ օրէք իւր տւերում
ները շարունակեց:

Յրանախ, Օվերնէի մէջ, շատ լեւ-
ներ կան, որք երբեմն հրացեալ նիւ-
թեր ժայթքած են, բայց այժմ այդ
հրաբուռները մարած են:

ՄԱՐ.—Երկիւղալի է ուրեմն Երկիրը
փորել, քանի որ անոր խորը կրակ կայ:

ՅՐ. ԹԱԳ.—Կը կարծուի թէ՝ կարելի
է մինչեւ 10 փարսան կամ 40 հազար
մէդր խորութեամբ փորել, առանց
հրոյ պատահելու. բայց երբեք այս-
չափ խորութեամբ փորուած չէ:

ՄԱՐ.—Վերջապէս խիստ երկիւղա-
լի է մտածել, որ օր մը մարդ կրնայ երկ-

րաշարժէ մ'արժննալ և հրեղէն անձ-
րեւի մը տակ գտնուիլ:

ՕՐ. ԹԱԳ.—Երկար ժամանակէ 'ի վեր
Յրանալի մէջ երկրաշարժ եղած չէ.
և կարծեմ թէ այժմ կրնաք հանգիստ
քնանալ: Մանաւանդ հարկ է դիտ-
նալ, որ ինչպէս եռացած կաթին ե-
րեսի սերը՝ կաթին պաղելովը կամաց
կամաց կը թանձրանայ, այսպէս ալ
կը կարծուի թէ՝ երկիրս հեռոյհեռէ
պաղելով՝ իւր կեղեւը տակաւ առ-
տակաւ կը թանձրանայ:



ՄԱՍՏԱՍԻԱՆԱՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 3:)

Սիլիստրէի բերդին առումն.—Ռուսաց
Պաշտան շեռները անցնիլն.—Քանի մի
դէպքեր, եւ կարեւոր պատրաստութիւն-
ներ.—Կայսերական գնդին Բալիւ ա-
գարակը փոխադրիլն, եւ հաճախ փա-
շային ճամբայ ելլալը.—Վիտինի Բան-
վայ առանձն Մուստաֆայ փաշայի գա-
լուստը.—Անդրխանապօլսոյ առումն,
եւ երեսփոխանաց որոշումն.—Քանի մի
խռովութեանց հրդեհին շիջումն.—Հաշ-
տութեան ժողովոյն կազմումն, եւ փո-
խադարձաբար պաշտօնական մուրհա-
կաց կնքումն, եւ սուղ ինչ պատերազմի
պատրաստութիւն:

Անցեալ տարուան Զիլգատէ ամսոյ
սկիզբէն 'ի վեր Ռուսաց զօրքը Սիլիստր-
րէի բերդը պաշարէր և վերջին ստա-
ճան կը նեղէր. թէեւ քաղաքին բնա-
կիչք գտնուած Իսլամ զօրաց հետ մինչ
այն կէտը քաջութեամբ եւ արիւն-
թեամբ ջանացին պաշտպանել, այլ ու-
րովհետեւ բերդին բոլորովը գտնը-
ւած պատնէշ, մարտից, և այլ ամ-

րութիւնները Ռուսք ականահատութեամբ նետած էին . և այնուհետեւ ընդգլխմութիւնը օգուտ չը գործեցին զինի , այսրան մանկանց կանանց և այլոց տարապարտ կորստեան պատճառովս լինէին . ուստի բնակչաց հաւանութեամբ Զիլհիճձէ ամսոյ վերջերը բերդը յանձնեցին : Քաւառին կուտակալ հաճի Ահմէտ փաշան , և նիդակակից նորին սերթ Մահմուտ փաշան Իսլամ զորաց հետ կապանօք գերի վարեցան : Ռուսաց յիշեալ բերդին այսպիսի եղանակաւ տիրելուն վերայ Օսմանեանք տագնապեցան , զի յայտնի կ'երեւէր թէ այնուհետեւ Ռուսաց բանակը Շուճնիի և Պալքան լեռանց ուրիշ կողմերը պիտի արշաւէ , վասն որոյ փութային սրբան կարելի էր հարկաւոր պատրաստութիւնները կազմելու , կայսերական բանակէն քանի մի երեւելի որաշտօնակալներ Իսլամ զորաց գունդերով Տէրփէ և Քէօպրի գիւղերուն կողմը խրկեցին Պալքան լեռանց կողմերը ամրացնելու :

Ինչպէս որ վերը յիշեցինք , Պալքան լեռանց ամրութեան և զգուշութեան համար զօրք և զօրապետք խրկուեցան . սակայն Ռուսաց զօրքը սոյն ժամանակին Քէօպրի գիւղին տիրեցին , և Պալքան լեռանց այս երեսը անցնելով՝ ուղղակի Միւսի-բի վերայ յարձակեցան . զի որովհետեւ այն կողմերը մեծ ջանից և կարեւոր ամրութեանց պէտք ունէր , կայսերական բանակը գտնուած Մէհմէտ փաշան Սպարապետի տնտղասով և զօրաց բազմութեամբ այն կողմերը խրկեցին : Քանի որ Ռուսք այսպիսի գիւրութեամբ Պալքան լեռները անցան , տէր մի արասցէ , երբ նոցա գէմ ելլող և ճանապարհը արգիլող մէկը չի գտնուի , այն ատեն գործը աւելի գծուար կը լինի , ուստի պէտք եղած պատրաստութիւն

ները տեսնուեցան . և ըստ պահանջման հարկին նուիրական դրոշը պատերազմի դաշտը տանելու համար , Արեւելեան կողմանց մօտ անդերը գլուխուած զէնք կրելու կարող բոլոր Իսլամ բարձրագոյն հրամանաւ մայրաքաղաքը հրաւիրեցան :

Յառաջագոյն գրեցինք թէ՛ Պալքան լեռանց կողմերը բաւականի չափ զօրք եւ զօրապետք խրկուեցան , եւ Այտուսի կողմերը Ռուսաց գունդերուն պատահելով սաստիկ ճակատամարտ մի մղեցին , սակայն ըստ անյաշող բերման բախդին Իսլամ զորաց զօրութիւնը բեկաւ և լքաւ և ամենեքին 'ի փախուստ աճապարեցին , եւ այս պատճառաւ այն կողմի կայսերական ամբողջ բանակը խորտակելով ցիւրուցան փախստական գնացին , և մեծամեծ պաշտօնավարք եանալօլի անկան : Ռուսաց այս անգամի թշնամական արշաւանքը վերջին աստիճան սաստիկ , եւ դիմագրաւ լինելն կարի դժուար և ակն յայտնի կ'երեւի ամեն հնարքներէն և ջանքերէն արտաքոյ լինելն , և միշտ զինադադարը և հաշտութիւնը պատերազմէն նախագրասէ , և ամեն կերպով լաւագոյն կ'երեւի մեզ ո՞ր և իցէ եղանակաւ հաշտութեան միջոյնները ձեռք առնել , և ասոր նման կարեւոր խօսքեր յառաջագոյն մեծ սպարապետի կողմէն ալ ծանուցուած էր : Վասն որոյ սոյն խնդրոյն վերայ խորհելու մեծի գէնպէտին ապարանքը ընդհանուր աւագաժողով գումարեցաւ , եւ խնդիրը վիճաբանութեան դրուեցաւ : Վերը գրուածին համեմատ , կայսերական պատերազմին հրատարակուած անարժան տառջարկութենէ եւ անպատշաճ պահանջմունքներէ յառաջ եկած է . և ասոր վերայ մեր կարողութեան համեմատ կարգադրութիւնք եւ պատրաստու-

Թիւնք չը պակսեցան . այլ ըստ պատահման Բախտի և ճակատագրի և ոչ մի գործ յաջողութեամբ յառաջ գնաց , և որքան բերդեր և ամրոցներ թնաւեաց ձեռքը մատնուելու , և զանազան տոտիճաններէ որչափ Իսլամք կապանօք գերի վարելոյ պատճառ եղաւ , և այսուհետեւ սորա երեւոյթը կարի տարօրինակ կ'երեւի , և լաւագոյն է այս բախտին թեթեւ արբեցումնէ վերահասած ցաւը եւ տրտմութիւնը , Տնօրէնութեան եւ հաշտութեան բաժակներով փարատելու կարգադրութիւնը , և վրէժխնդրութեան լի բաժակին ըմպումը ուրիշ ժամանակի թողուլ , և այս կերպով ամենեքեան որոշեցին հաշտութեան ճարը գտնելու ջանքեր ընել : Սակայն թնամուոյն իրենց տկարութիւնը յայտնել կարի անպատշաճ կը թուէր , ուստի կարեւոր դատեցին պէտք եղած պատրաստութիւնները կազմել , և անմիջապէս արժան դատեցին կայսերական թիկնապահ զօրաց Տոհաֆըլ Օսման փաշային հետ քանի մի վաշտ Մանսուրէ կոչեցեալ զօրք , և Մայրաքաղաքին բոլոր գիտնականաց մեծամեծաց և պաշտօնէից հովանաւորութեանց տակ գտնուածներէն՝ ըստ պատշաճի հետեւակ և այրուծի՝ նոցա ընկերացնելով փութանակի բանակ մի կազմել : Եւ որոշեցին Ջերմէն գաւառին կառավարիչ Աստորրահիմ փաշան , որ իւր պաշտօնական գործերուն վերահասութիւն չէր կրնար գործել . նոյն նահանգն , Պալքան լեռանց այս երեսը , և Անգրիանուպօլսոյ շրջականերն Ալիւ փաշային տալ Սոյարապետութեան պատուանունով . և ամենցուն պէտքերը ամբողջապէս հոգացուելով կատարուեցաւ :

Ասկէ յառաջ կայսրը նուիրական դրողով Գալէնպէի և նորա շրջակաները գնալ

ցած էր , այլ ժամանակին դէպքերը ՚ի նկատի ունելով , այնուհետեւ անյարմար էր այն կողմերը մնալ , ու ստի Սէֆէր ալսոյ Գին , կայսերական գնդով մեծ փառօք նոյն տեղէն Րամիի ագարակը փոխադրեցաւ : Եւ կայսերական թիկնապահ զօրաց Տոհաֆըլ Օսման փաշայի հետ գնալիք որոշեալ կայսերական բանակը կազմուած գողով , նոյն ամսոյ 10ին Տալուտ փաշայի դաշուէն պատերազմի դաշտը մեկնեցաւ :

Ռուսաց զօրքը յառաջագոյն Վիտինի կողմերէն ալ Թունայի գետը անցնելով՝ այն կողմերը եկած և Բահլայ աւանին տիրած էր , և նոյն տեղւոյն աղատութիւնը յառաջագոյն Շէրտրայի Մուստաֆայ փաշային յանձնուած էր , փաշան Վիտին հասնելով՝ այն կողմերը քանի մի վաշտ զօրք խրկած էր , և այս պատճառաւ այն տեղ եղած Ռուսաց զօրքը չի կրնալով դէմ կենալ , Թունայ գետին միւս երեսը անցան , եւ նոյն աւանը վերստին ետ առին :

Որովհետեւ Ռուսք Պալքան լեռանց այս երեսը անցած էին , Օսմանեանք յակամայից բռնագասեալ հաշտութիւնսու որոշում տուին , այլ մինչդեռ կը գանդաղէին կայսերական բանակէն պատգամաւորներ խրկել , Ռուսք յառաջ քալեցին և քանի մի քաղաքաց առանց պատերազմի դիւրութեւ տիրեցին , ուրք են Եանպօլի , Իսլիմիա , Գըրդէիլիսայ , Ալինէ ատա , և ՚ի վերջոյ երկրորդ արքայանիստ Անգրիանուպօլիս (Էրէրէ) մայրաքաղաքը : Սոցա առաւանակ երեւոյթը , Տէր մի արասցէ , ուղղակի Կ. Պօլիս էր , որքան որ կայսերական բանակին փոխանորդ Թահիր էֆէնտին հաշտութեան պատգամաւոր որոշուած էր , սակայն գործը օր յառաջ լրացնելու համար , անմիջապէս առաջին մասին տուեալաւ Մէհմէտ սատրք էֆէնտին , առաջին

երեսփոխան, և Անատոլիի աստիճա-
նաւ Կ. Պօլսոյ նախկին դատաւոր Ապ-
տիւլ Գատր Պէյ, երկրորդ երեսփո-
խան, կայսերական ատենին դպրա-
պետ Աքիֆ էֆէնտի, եւ տիվանի
Թարգման Էսրար էֆէնտի, սոցա ըն-
կերանալով Անդրիանուպօլիս ուղեւո-
րեցան:

Այս ժամանակներս սինդիքոր եւ
կարճամիտ մարդիկներէն ոմանք վերո-
գրեալ խնդիրն պատեհ առիթ համա-
րելով՝ յանդգնեցան առաջին խռովու-
թիւնները և անկարգութիւնները վե-
րօտին արթնցնել, և սկսան ստացօգ-
բանիւք անվայել և անարժան խօսքեր
խօսիլ նոր օրինաց և կարգաց վերայ,
մանաւանդ աստիքի մաստօրիէ՝ Մէհէմե-
տիէ կոչեցեալ գունդին, զոր խաղա-
ղասէր Սուլթան Մահմուտ արքայն
բազում դժուարութեանց յաղթելով
հազիւ յաջողէր էր գրել և կազմել,
եւ ասոնց շատերը խափանեալ օ-
ճաղին պաշտպաններէն էին, մանա-
ւանդ նոյն օճաղին նախկին պաշտօնեայ-
ներէն չարագրգիւ մարդիկներ միջա-
մոտելով, Աստուած հեռի արասցէ,
Անդրիանուպօլսոյ դէպքէն վերջը՝ գը-
ժուարին բաներ յարուցանել կերեւա-
կայէին, մինչ զի Սեաւ ծովու նեղու-
ցին վերատեսուչ Գաբուճի պալէ (սե-
նեկապետ արքայի) Համիտ աղային
յանդգնութեամբ բրած անհաւատար-
մութիւնները մի ըստ միովէ Արքայն
լսելով, անմիջապէս գլխատել տուաւ,
նոյնպէս ուրիշ այսպիսի խռովարար և
նենգամիտ մարդիկներ զինի քննու-
թեան տանջանքներու մատնեցան: Ար-
հեստաւորաց գլխաւորներէն ոմանք,
որոց անկարգ և անպատեհ գործքերը
արդէն իմացուած գոլով, յաւիտենա-
կան արքայի դատապարտեցան: Ինչ
պէս այս անկարգութիւնները Կ. Պօլ-
սոյ մէջ ծայր տուած էր, նմանապէս

Անապոլէի և Ռումէլի քանի մի տեղերը
սկսած էին խլրտիլ, մանաւանդ Այ-
տինի կողմերը շէյախ կոչեցեալ աւա-
ղակաց գլխաւոր չէլ Մէհէմեթի նման
քանի քանի խռովարարներ յայտնուած
էին, այլ փառք բարերարին՝ Տէրու-
թեան պաշտօնէից ձեռօք խռովու-
թեան եւ անկարգութեան հուրը,
տանջանաց անյագ սրոյն արեան հե-
ղեղներով մարեցաւ:

Ինչպէս յառաջագոյն գրեցինք, ա-
մենեցուն բաղձալի հաշտութեան ժո-
ղովը կազմելու համար, այս կազմէն
երեսփոխաններ խրկուած էին, եւ
յԱնդրիանուպօլիս ներկայ խնդրոյն վե-
րայ սկսան խօսիլ: Ռուսաց տիրած տե-
ղերը՝ վերստին Օսմանեանց թողուլ,
բաց ՚ի Անաբայի՝ չերբեղաց՝ Ալսլիսա-
յի, Ախլքիլէի բերդերէն, որոնք Ռու-
սաց կողմը պիտի մնան: Աքքիրմանի
դաշնադրութեան մուրհակին մէջ գը-
րուած ծանուցեալ խնդիրները կատա-
րեալ պիտի դորձադրուին: Լոնտրայի
դաշնադրութեան համեմատ՝ պատե-
րազմ հրատարակելու միմիայն առիթ
տուող Մօռայի ազատութեան խնդի-
րը անթերի պիտի կատարուի: Իպրա-
յիլ, Եէր կէջ (որ է մայր բերդորէից
և տակաւին թշնամոյ ձեռք չի մատնը-
ւած) բերդերը, որպէս թէ Ռուսաց
կողմէն քանդուած լինելով, նոյն ամ-
բութեանց բոլորովին ջնջուելու թոյլ
տուութիւն: Այսուհետեւ Թունայ
գետին միւս երեսը Իսլամ Ժողովուրդ
չի բնակին երբէք: Մօլտովալաքիոյ բը-
նակեցոյ՝ ազատութիւնը կատարելապէս
յարգուի: Վաճառականութեան վը-
նասուց փոխարինութիւն 96 հազար
քսակ մէկ ու կէս տարուան մէջ որո-
շեալ բաժիններով հատուցանել, Ռու-
սաց նաւերը Սեաւ ծովուն մէջ ամե-
նայն համարձակութեամբ շրջիլ: Իսկ
պատերազմի ծախուց փոխարինութիւն

700 հազար քսակ դրամ պահանջեցին, այլ այս գումարը խիստ չափազանց լինելով՝ վար իջնալը Ռուսաց կայսեր գլխութեան թողուցին: Որքան որ վար իջնայ, մինչեւ որոշեալ պայմանաժամուն ամբողջապէս հատուցանելու, Սիւլիսդէ քաղաքը, Էֆլաք և Պուղտան երկիրները իբրեւ գրաւ Ռուսաց ձեռքը մնալու պայմանաւ, Վերոգրեալ վաճառականութեան վնասուց փոխարինութեանց բաժինները քանի որ վաճարուին Օսմանեան Պետութեան երկիրները կարգաւ մէկ ու կէս տարուան մէջ թողուին, և այս եղանակաւ հիմնական հաշտութեան որոշում տուին, և Ռեպլէ-է-Վէ 15ին երկու կողմի երեսփոխանք ՚ի պաշտօնէ փոխադարձ մուրհակներ կնքեցին, և երկու կողմէն ալ զինադադար եղաւ:

Որովհետեւ Ռուսաց այս ծանր առջարկութիւնները ընդունիլ անկարելի, եւ այսպիսի դժուարակիր բռնանց ներքեւ մօնալ և ճնշուիլն անհնարին էր, այլ ըստ հարկին եւ ժամանակին գէպքերը ՚ի նկատի ունելով, ակամայ կամօք պարտաւորեցանք ընդունիլ, զի Ռուսք Անդրիանուպօլսէն փութով չը պիտի մեկնէին, և այս պարագայիս քանի քանի չար դիտաւորութիւններ ունէին իրենց սրտին մէջ, որոյ վերջին վախճանը անպատճառ խռովութեան պիտի հասնէր, ուստի կարեւոր դատուեցաւ պարտուպատշաճ պատրաստութիւնը և զգուշութիւնը ձեռքէ չը թողուլ: Այլէքսանդրիոյ կառավարիչ Մուստաֆա փաշան ՚ի մասին Անդրիանուպօլսոյ դիպուածոց, պաշտօնին փոփոխութեամբ բաւական զօրքով Ֆիլիպէ եկած էր, նորա այն կողմերը պատրաստ կենալու, և Մուսայի խնդրոյն գործադրութեան պատճառաւ Րոմէի կուսակալին այս կողմերը դալու: և Սլիշ փաշային մի

բանակով Սիլիստրէ նստելն յարմար դատուելով, հրաման եղաւ, և նոցա պէտքերը հագայուեցան: Իսկ Ռուսաց հարկապահանջութեան խնդիրը թեթեւցնելու համար, Մանուէլ զօրաց Սպարապետի փոխանորդ Խալիլ Րիֆաթ փաշան յատուկ դեսպան, և Պալդան լերանց նախկին տումարաւ կալ Նէճիպ էֆէնտին Նշանձոմ-իւն առտիճանաւ ներքին խորհրդական որոշեցան, եւ կայսերական ֆրգամսնով մինչ ՚ի Հոճայ պէյ և անտի ցամաքէն Բեդրսբուրգ երթալու ճամբայ ելան: Երկուքն ալ յիշեալ տեղը հասնելով, պահանջուած տուրքէն բան մի չը կարողացան վար իջնալ, միայն պատեւրազմի ծախքէն, այս կողմը Մուսայի խնդիրը ընդունուելուն համար մէկ միլիոն մաճար ոսկի վար իջնալէն զատ, նոքա եւս այն տեղ երկու միլիոն վար իջեցուցած են: Իսկ մնացեալ գումարը մինչեւ վեց տարուան մէջ հատուցանելու համար, Էֆլաք և Պուղտան երկիրները Ռուսաց զօրքերէն ազատ պիտի լինին, և միայն Սիլիստրէ քաղաքը իբրեւ գրաւ իրենց ձեռքը մնալու պայմանաւ որոշում տուած են: Սոյն ժամանակին ծովային գործոց պաշտօնեայ Ահմէտ փաշան մեռած էր, նորա պաշտօնը յիշեալ Խալիլ Րիֆաթ փաշային տրուեցաւ:

Ասպորաճապոր Եպիսկոպոս
Տ. Յովհաննէսեան:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ

Ի Սուրբ Էջմիածին: 1876 Յուլի 20.

(Շարունակութիւն, տես թիւ 5.)

Առաւօտ ժամ 1ին հասանք Իյնէ պօլէ կոչեցեալ փոքրիկ տւանը ծովեզերքը շինուած, այլ շատ տուներ լեռներուն վրայ անտառաց և սարտեղներուն մէջ ցրիւկը տեսնուին, նաւահանգիստ չունի,

ալեկոծութեան ատեն խիստ վտանգաւոր է, աւանին արեւելեան կողմը փոքրիկ բլրակ մի կ'ամբառնայ դէպ 'ի ծով երկարած. երկրին բերքն է հարուստ ատաղձ (խերիպէ) ամեն տեսակէն, որ շրջակայ ճոխ անտառները կ'մտտակարարեն մինչև միւս երկու ժամ կամ աւելի ևս հեռաւորութեամբ գիւղականք փայտահարութեան կրտսրապին, և կը պատրաստեն տախտակ և այլ պիտանաւոր նիւթեր, և մեծամեծ նաւեր բեռնաւորելով կ'փոխադրեն Կ. Պօլիս և այլ հեռաւոր տեղեր, խիստ առատ է մրգեղէնն, որոց մէջ գովելի է տանձրն և խնձորն՝ իրենց համովն ու տեսակովն, զորս հազարաւոր անտուկներով կրփոխադրեն 'ի Կ. Պօլիս և յայլ տեղիս, բնակիչք Մահմետականք և Յոյք, թերեւս մի կամ երկու հայ գտնուի, այն եւս պանդուխտ։ Աստի կ'ճանապարհեն ոմանք դէպ 'ի Ասիոյ կողմերը։ Նաւը իւր գործը փութով աւարտեց, և մեկնելով իւր առաջի ճանապարհը շարունակեց. այս եղբքը հեռուէն կը նշմարուէր գոգ մի, ինձի պո-րոն կու չեցեալ, ուր շինուած էր աշտարակ լսպտերի, ինչպէս ուրիշ շատ հարկաւոր տեղեր։ Աստի սակաւ ինչ յառաջանալով, սկսաւ երեւիլ Սինոպ քաղաքը ծովեղբքը կառուցեալ, իւր հնութեամբ, ամրութեամբ և անառիկ բերդովն հռչակաւոր է 'ի հինս և 'ի նորս. քաղաքը կը շրջապատէ քարուկիր ամուր պարիսպ մը, հարաւային կողմը կամբառնայ հին բերդն իւր լայնանիստ տարածութեամբ, արեւմտեան ծովածոցը կը տարածուի մինչ 'ի քաղաքին պարիսպը, հիւսիսային կողմը մեծ բլրակ մի կամբառնայ մինչ 'ի ծովն երկարած, որոյ ստորոտները կ'երեւին տուններ եւ պարտէզներ, իսկ վերին կողմերը ժայռ և անբեր, սակայն աւրեւելեան ծովածոցը խիստ գեղեցիկ է,

որոյ ջրերն միշտ կը թանան քաղաքին պարիսպը, այն է գեղեցիկ և գովելի նաւահանգիստը, որ իւր ծոցը կը պատըսպարէ և կը պահպանէ մրկալից օդերէն եւ խռովեալ ծովերէն խոյս տուած եւ աստ ապաւինած նաւախումբը. քաղաքը տափարակ դաշտի վերայ շինուած է, և հարաւային կողմը միայն ցամաք, և ծովը երկարած բլրակը գրեթէ թերակղզի մի կը ձեւացնէ. հեռուէն կը նշմարուին եկեղեցեաց և մզկիթաց մեծամեծ գմբեթները և աշտարակները (մինարէ), և այլ երեւելի շինուածոց տեսարանները. բնակիչք Մահմետականք եւ Յոյք, թերեւս մի կամ երկու պանդուխտ Հայ, աստ նաւը չի հանդիպեցաւ։

Գիշերը ժամը 5 էր հասանք Սամսոն քաղաքը, առաւօտեան որքան կարելի էր դիտեցինք քաղաքը եւ նորա շրջակայքը, օրինաւոր նաւահանգիստ չունի. քաղաքը ծովեղբքէն սկսեալ դէպ 'ի բլրակները կը տարածի, և վերի կողմն եղած փոքր բլրակներն դիտողի տեսութենէն կը ծածկեն սորա արգաւանդահող դաշտերը և պարտէզները, շոգենաւուց երթեւեկութիւնը փոքր ինչ վաճառականութեան դիւրութիւն կը տայ, Ասիոյ այլ և այլ կողմերը փոխադարձաբար վաճառք փոխադրելու։ Աստի շատ անգամ կարաւաններ կուղեւորին Սեբաստիոյ, Ամասիոյ, Կեսարիոյ, և Ասիոյ ուրիշ կողմերը. Բնակիչք Մահմետականք, Հայք, Յոյք, առհասարակ վաճառականութեան և արհեստի կը պարապին, Հայք ունին եկեղեցի եւ դպրոց, և կը համարուին 200 տունի չափ, մտադիր են առանձին առաջնորդ ունենալ քաղաքին վերաբերեալ գիւղերն հետը միացնելով։ Առաւօտ ժամ 1 ին մեկնեցանք սաստի, մեզմէ խիստ հեռացած էին Ասիոյ բարձր և անտառաւէտ լեռնե-

ըր, բայց նոցա տեղ մեր աչքին առջեւ կը պարզուէին քաղաքէն սկսեալ ծովեզերքի երկարութեամբ մացառուտ և ճախնային շամբեր, որոց մէջ կ'աճին և կը սնունին վայրենի կիներ և այլ սխտպէս կենդանիք, թռչունք և հաւեր, որոնք առատ կերակուր և շահ են քաղաքին որսորդաց: Այս մացառուտը աւարտելէն զինի, վերջստին մօտեցանք Ասիոյ զուարճալի լեռներուն, որոց գագաթը անտառ, կողերը և ձորակները շատ տեղ մշակուած եւ մշտադալար. աստ է Եասոյ կոչեցեալ գիւղը, և առհասարակ գրեթէ այսպիսի փոքրիկ գիւղեր եւ տուններ կան, որոց խիստ սակաւները կարողացանք տեսնալ, զի նաւը երբեմն եզերքէն աւելի կը հեռանար, և անկարելի կը լինէր դուրսը բան մի նշմարել: Այս եզերքէն լեռներուն գեղեցիկ գիրքը, և նոցա վերայ բարձրացած ծառատնկոց կարգաւորութիւնը, մշակուած և մշտականաչ գետիկները, և տեղ տեղ փոքրիկ աղբերականց հեղասահիկ ջրերը այնքան սքանչելի և զմայլելի են, որքա՞ն առհասարակ ծանապարհորդաց զուարճուի և բերկրուի կ'ազդեն:

Եւ մինչ այս բնութեան ձիրքերը կը զննէինք, ահա՛ մօտեցանք Վօնայ պոռնի կոչեցեալ տեղին, անտառէն դատարկ մնացած, լեռներուն կողերը առհասարակ Եգիպտացորեան ցանուած է, բնակչաց տունները լեռներուն վրայ եւ անտառներուն մէջ կը տեսնուին. անուանի է Վօնայի բնական ծովացոծը, որ գեղեցիկ նաւահանգիստ է, որուն եզերքը առհասարակ բնակութիւն և պարտէզներ կը տեսնուին: Ժամը 9 էր երեկոյեան հասանք Օրտու կոչեցեալ աւանը, բարձր լեռան ստորոտը արեւելեան կողմը ծովեզերքը շինուած է, և նոյն լեռան վրայ կան տուններ իրրեւ ամա-

ռանոց, որ ինքեանք կը կոչեն Պօլ փէլէ, նաւահանգիստը փոքր և բնական գիրքով ծոց մի է, այլ ոչ այնքան ապահով, այս աւանը կան Հայ բնակիչներ որոց շատերը եգիպտացորեանի մշակութեան կը պարապին, և այլք ի տուր և առիկ գործս, ունին նաեւ աւանին արեւելեան կողմը բաւականի չափ մշակելոյ և սերմանելոյ արտեր: Նաւը աստ տասը վայրկեան հազու կենարով մեկնեցաւ, և գիշեր ժամանակ հասանք ի Վիրասոն քաղաքը, գիշերը արգէն իւր սեւ քօղը տարածած էր բնութեան վրայ, ուստի անկարելի էր մութին մէջ բան մի նշմարել, ոչ նաւահանգիստը, ոչ քաղաքին գիրքը, ոչ նորա շրջակայ պարտէզները և անտառաւէտ լեռները, և ոչ սակաւաթիւ Հայոց վիճակին վերայ փոքր ինչ տեղեկութիւն ստանալ, երկրին բերքերէն նաւը բերած էին տանձ, խնձոր, դեղձ, խաղող, եւս առաւել կաղին (ֆրալճ) որ անուանի և ընտիր տեսակն է, սորա տունկը խիստ առատութեամբ կը մշակեն աստ, եւ գրեթէ առհասարակ դաշտերը եւ լեռները սորա տունկերը կը ծածկեն, և մեծ առատութեամբ ի թուրքիա և Ռուսաստան կը փոխադրեն նաւերով:

Աստի մեկնելով չորեքշաբթի առաւօտ հասանք ի Տրապիզոն մայրաքաղաքն Պոնտոսի, նաւահանգիստ չունի, եթէ չը դգուշանան վտանգներու կը պատահին նաւք և նաւակք ալեկոծութեան ատեն. քաղաքը բաւականի չափ մեծ է, ծովեզերքէն ըսկըսեալ դէպ ի վեր կը տարածուի, այլ ամբողջ գիրքը ծովէն չի տեսնուիր, շինուածք հասարակաց են, աչքի զուրկները այլադգեաց մղկիթները եւ յունաց մի նորաչէն եկեղեցին է. վերի կողմը կը տեսնուի փոքր բլրակներ, տուններ և պարտիզակներ իրրեւ ա-

մառանոց : Հնութեանց բեկորներն անգամ չեն երեւիր , զանազան դուրերու մէջ պատահած յեղափոխութիւններն և դէպքերը անհետ բրած են . բնակիչք Մահմետականք , Հայք և Յոյնք , որոց շատերը վաճառականք . այլք առևտրական գործերով կը պարապին , իսկ մնացեալները արհեստաւորք , Հայք կը համարուին իբր 800 գերգաստանք , ունին երեք եկեղեցի եւ վիճակաւոր Առաջնորդ , Ազգային դպրոց , անշարժ կալուածք , որոց եկամուտը կը ծառայէ Գալոյցին և Առաջնորդարանին , քաղաքէն դուրս ունին մի վանք , և նոր դերեզմանատուն ծովեզերքը , եւ կից նմին ընդարձակ արտեր , շինուած է կառուղի աստի մինչ ՚ի Կարին , և սոյն ճանապարհէն կ'ուղեւորին Հայաստանի այլ և այլ գաւառներու ճամբորդները : Վաճառականութիւնը բաւական յառաջացած կ'երեւի , եւ ուրիշ գաւառներ ճիւղեր ունի , ոչ սակաւ դիւրութիւններ եւ օգուտներ կը մատակարարեն Եւրոպական ընկերութեանց շոգենաւք , եթէ նաւահանգստին վտանգը բարձուի : Երեկոյին ժամ 10 ին մեկնեցանք աստի , գիշերը շարունակ նաւելով առաւօտ ժամ 11 ին հասանք ՚ի Պաթում . նաւահանգիստը ապահով եւ բնական դիրքով դէպ ՚ի հարաւ երկարած ծոց մի է . Օսմանեան Պետութիւնը ունի աստ բաւական ամրութիւններ ՚ի զգուշութիւն արտաքին թշնամեաց : Աստի կուղեւորին Արդուին քաղաքի ճանապարհորդք թէ ՚ի ծովու և թէ ՚ի ցամաքի : Աւանը բարձրաբերց և անտառախիտ լեռներուն ստորոտը շինուած է տափարակ դաշտի վերայ , շինուածք հասարակոց , բնակիչք՝ Մահմետականք , Վրացիք , և Պապական հայք սակաւք , կը յաճախեն աստ նաւեւ հայեր առ և

տրական գործոց համար , անուանի է տեղւոյն բարեհամ եւ մարտեցուցիչ ջուրն , որ մինչ ՚ի Կ . Պոլիս Սուլթաններուն կը տանին . առտու է ամեն տեսակ մրգեղէնը , մինչ ՚ի Պաթում Ռուսաց ընկերութեան շոգենաւերը կը բանին . ուստի աստ մեծ նաւերէն կը փոխադրուին ճամբորդք եւ բեռնիք փոքր նաւերը , և առաւօտ ժամ երկուքին մեկնեցանք աստի միշտ դիտելով թէ՛ ծովեզերքը և թէ՛ Պաթումի լեռանց անընդհատ շղթաներու վերայ եղած գիւղերը և լեռներուն կողերու վերայ այսր անդր յրուած տունները , բնակութիւնները , այգի և պարտէզները այլովքն հանդերձ մինչ ՚ի Զիւրի-սահա-համանուն գիւղը որ ծովեզերքը շինուած է , Զիւրի-սահի եւ Փոթի մէջ տեղն է Ռուսաց եւ Օսմանցուց սահմանագլուխը , որ գետ մի կանջուր պետէ . Ռուսք այս սահմանագլուխը Նիկոլայեֆ կը կոչեն , յանուն բարեյի շատակ Նիկողոս Կայսեր իւրեանց : Սահմանագլուխն երկու կողմը ըստ օրինաց պահապան զօրքեր կան , Ռուսաց կողմը խիստ անտառախիտ է , և երբեմն գիւղեր եւ տուններ կը նշմարուին , այլ Օսմանեանց կողմը ոչ նոյն պէս : Պաթումէն մինչ ՚ի Փոթի շարունակ նաւելով 4 ժամ կը տեւէ . և ահա մտանք Ռիոն գետը՝ ջուրը միշտ պղտոր , և տակաւ յառաջանալով շոգենաւը մաքսատան առջեւ կանգնեցաւ : Նախ Ռուս պաշտօնատարք բոլոր ճանադարհորդաց անցագրերը մի առ մի խտրել քննեցին և ժողովեցին՝ իւրաքանչիւրոց մէն մի թուահամար տալով , և յետ այնորիկ մաքսի վերաբերեալ քննութիւնները եղան , և ապա յրուեցան , անցագրերը տեղւոյն կառավարչի տունէն վաւերացեալ ստանալու պայմանաւ :

(Երբ-նախել :)

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ

Ատանայէն Մարտ ամսոյն գրուած նամակ մի անձրեւաց առատութեամբ տեղւոյն գետի յորդութիւնը և եղած վնասներն պատմելէ յետոյ հետեւեալ օրտաճմիկ դէպքը կը յաւելու :

Հաճնցի պանդուխտ Հայ երիտասարդ մի իւր տունը մեծ մասամբ ողողման զոհ տալով քաշուած աւերեալ տան մի անկիւնը դարբնութեան արհեստովը իւր օրապահիլը ճարելու կ'աշխատի . Զարսը աղասին կ'աղղաբարէ , որ պէտք է Պէլէտիէյի շինած խանութներէն վարձէ և հոն աշխատի . դժբաղդ երիտասարդը քաղցրութեամբ կը յայտնէ իւր վարձ տալու անկարողութիւնը . այլազգը սաստիկ զայրացած՝ անգթաբար կը գանակոծէ , երիտասարդը անկողին կ'իյնայ և երբեմն կըսկսի բերնէն արիւն գալ եւ մի քանի օրէն կը կնքէ իւր մահ . կանացուն : Մի կողմէն յուղարկաւորութիւնը կը կատարեն և միւս կողմէն այս բարբարոսութեան դէմ Վալիին բողոք կը տան . թաղումը կ'արգիւցնի , մի քանի բժիշկներ կը զրկուին քննութեան , ննջեցալը կ'անդամահատեն , և կ'ըստուգեն դէպքը . բայց դեռ եւս արգիւնք մի չէ ունեցած :

— Ամսոյս 5 ին քաղաքս ժամանեց Սպանիացւոյ նոր Հիւսպատոս Պ . Օշուրոս . որովհետեւ նախորդը Պերու թիւնդհանուր Հիւսպատոս անուանեցաւ :

— 10 ին քաղաքէս մեկնեցաւ իւր պաշտօնատեղին Պերու թիւնդի նախագահը , որ ինչպէս առաջ գրած եմք , եկած էր քաղաքիս Կառավարչի գործոց քննութեան համար :

— 14 ին , պատերազմ հրատարակուելուն պատճառաւ Ռուսաց հարստակները մեկնեցան . մեկնել չուզողները Գերմանացւոյ հիւսպատոսարանի պաշտպանութեան յանձնուեցան , ինչ

պէս և Ռուսաց փոնքը և հիւսպատոսարանը : 15 ին Հիւսպատոսը մեկնեցաւ :

— 18 ին Գամակուտէն գրուած նամակ մի հետեւեալը կը պատմէ : Օր առաջ Բերիացի զօրք մի Պէլ Պաշարին ղէնք ծախողի մը խանութէն դաշոյն մի կ'առնէ , նայելու պատրուակաւ և բովը կեցող երկու հրէի կը զարնէ . մին անմիջապէս մեռաւ , միւսը տակաւին ողջ է . զարնող զօրքը հարցաւ քննութեան մէջ չուրացաւ . բայց երբ ոճրագործին կախուելու լուրը տարածուեցաւ , անցեալ կիւրակէ Սարային դուռը թուղթ մի տեսնուեցաւ Տաճիկներէն գրուած , որոյ իմաստն էր , և թէ այս զօրքը հրէին համար սպաննէր , 1860 ին քրիստոնէից բրաճներէս աւելի դէշ կրնեմք հրէայնէրը : Կառավարութիւնը մինչև ցարդ այդ մասին բան մի չըրաւ և հրէայք վրէժ խնդրութենէն սակաւ ինչ կ'ստեղծան :

Պերու թիւնդքերը այս դէպքի մասին գրելով ըսած էին , որ Գամակուտի եւ Բերիոյ Հրէայք գիր տուած են կառավարութեան , թէ մեր արեան գին չեմք պահանջեր , բայց կառավարութիւնը պատասխանած է , թէ այդ իրեն կը վերաբերի :

— 21 ին թիւնդի մէջ , որ Ռէմէյի մէկ գիւղն է , 500 քրիստոնեայ և 3—4000 տաճիկ բնակչօք , տաճիկ տղայք բերիստոնէից զանազան հայհոյութիւն ընելով՝ եկեղեցին կը քարկոծեն . բերիստոնեայք չը տանելով այս ծանր նախատանաց չափահաս տաճիկներու հետ բանակաւ կը բռնուին նախ և ապա իրարու կը զարնուին , բայց բարեաղբաբար անվնաս . եղելութիւնը այս առիւթ իմացուելով՝ Կառավարութիւնը կը հեռագրէ Յոսպէի Գայմազամին , որ Ժողովն անդամաց ընկերութեամբ լիւթ երթայ , այս տեղէն եւս զապթիյէի հազարապետը զրկուեցաւ , որպէս զի այս դէպքին պատճառը և առիւթ տուողները փնտռեն և քննեն :

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Արրահամ Գ. Կաթողիկոս. (Շար. և Վերջ) . . .	73-77
Հայ եւ կեանք	77-80
Մարդ. — Արտաքին մարդ. (Շարահանկէ) . . .	80-83
Բնագիտութեան և Տիեզերագրութեան վրայ սարգ խօսակցութիւն	84-88
Պատմական. (Շար. և Վերջ)	88-92
Ուղեւորութիւն ի Ս. Էջմիածին. (Շարահանկէ) . .	92-95
ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆՔ	-96

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամէն ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս
ուլթածալ թղթով :
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մէճիտիկ, Ճանապարհի ծախքով
միասին, կանխիկ վճարելի :
- Գ. Զատ տետրակ առնել թւոյղը պէտք է ամեն մէկ տետրին շորս դա-
հեկան վճարել :